



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՐԴՈՒ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՉԵԿՈՒՅՑ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒԾ
ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՍՇԱԿՈՒՅԹԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ

ԵՐԵՎԱՆ 2018

Սույն հայեցակարգը պատրաստվել է Քաղաքացիական հասարակության ինստիտուտ հկ և «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության՝ «Խոշտանգումների և վատ վերաբերմունքի նվազեցումը Հայաստանում և Վրաստանում կանխարգելիչ մշտադիտարկման մեխանիզմների հզորացման միջոցով» ծրագրի շրջանակներում՝ Նիդերլանդների արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

Նյութի բովանդակության համար պատասխանատու է բացառապես հեղինակը, և այն որևէ ձևով չի արտահայտում ֆինանսավորող կողմի տեսակետները:



Ministry of Foreign Affairs of the
Netherlands



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԿ
CIVIL SOCIETY INSTITUTE NGO



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ.....	6
1.1. Անձին ազատությունից զրկելը՝ որպես բացառիկ միջոց.....	6
1.2. Քրեակատարողական համակարգի անձնակազմ.....	9
1.3. Ազատությունից զրկված անձանց հետ տարվող աշխատանքներ.....	14
1.4. Զբաղվածություն և կրթություն.....	17
1.5. Պահման ընդհանուր պայմաններ.....	21
ԳԼՈՒԽ 2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ.....	24
2.1. Տեղաբաշխում.....	24
2.2. Անհատական գնահատում.....	28
2.3. Խրախուսանքի և տույժի միջոցներ.....	32
2.4. Կապն արտաքին աշխարհի հետ.....	34
2.5. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը.....	36
ԱՄՓՈՓՈՒՄ.....	43

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բանտային ենթամշակույթն ազատությունից զրկված անձանց արժեքների, համոզմունքների, սովորույթների և նրանց կողմից ընդունված վարքագծի կանոնների ամբողջություն է, որն անխուսափելիորեն առաջանում է մեկուսացման մեջ հայտնված անձանց շրջանում: Հասարակությունից մեկուսացվելով՝ ազատությունից զրկված անձինք հայտնվում են նոր միջավայրում, որտեղ ինտեգրվելու համար նրանք աստիճանաբար սկսում են ընդունել այնտեղ գոյություն ունեցող արժեհամակարգը և կանոնները:

Սույն հայեցակարգում քննարկվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում գոյություն ունեցող քրեական ենթամշակույթը, որը բանտային ենթամշակույթի յուրահատուկ տեսակ է և բնորոշ է խորհրդային և հետխորհրդային երկրներին:

Դրա արմատները սկիզբ են առնում ստալինյան «Գուլագ»-ի (ГУЛАГ) ժամանակաշրջանից, երբ խորհրդային քրեակատարողական համակարգում ստեղծվեցին հավաքական ճամբարներ, որտեղ գերիշխող դիրք էր գրավում հանցագործների եղբայրությունը: Դրա ներկայացուցիչները, ստանալով «օրենքով գողի» կարգավիճակ, ձեռք էին բերում իրավունքներ ու արտոնություններ՝ միևնույն ժամանակ ստանձնելով պարտականություններ՝ ի դեմս եղբայրության մյուս ներկայացուցիչների²: Նրանց միավորում էր յուրահատուկ արժեհամակարգ և վարքագծի խիստ կանոններ, որոնք պետք է պահպանվեին միմյանց և այլ անձանց հետ փոխհարաբերություններում³:

Չնայած ԽՍՀՄ փլուզմանը՝ արդեն իսկ ձևավորված և լայն տարածում ստացած քրեական ենթամշակույթը շարունակում է գոյություն ունենալ հետխորհրդային մի շարք երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում գոյություն ունեցող ենթամշակույթին անդրադարձ է կատարվել նաև միջազգային հանրաճանաչ կառույցների կողմից: Մասնավորապես՝ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ ԽԿԿ) Հայաստանի վերաբերյալ զեկույցներում արձանագրել է Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում *ոչ ֆորմալ բանտային հիերարխիայի* գոյությունը⁴:

¹ Ռուսերենից թարգմանաբար՝ «Ճամբարների և կալանավայրերի գլխավոր վարչություն»:

² Տե՛ս «Baseline study into Criminal Subculture in Prisons in the Republic of Moldova», 2018, <https://rm.coe.int/criminal-subculture-md-en-/1680796111> կայքէջում, էջ 10:

³ Տե՛ս «The society of the vory-v-zakone, 1930s-1950s», Ֆեդերիկո Վառես, 1998թ.:

⁴ Տե՛ս Հայաստանի վերաբերյալ ԽԿԿ-ի 2011 թվականի զեկույցը՝

https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806844c_d կայքէջում, կետեր 60, 66, 68, և 2016 թվականի զեկույցը՝

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806bf46f> կայքէջում, կետեր 49, 53, 54, 110:

Դրան անդրադարձ է կատարվել նաև Միավորված ազգերի կազմակերպության Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի կողմից Հայաստանի վերաբերյալ 2017 թվականի չորրորդ պարբերական զեկույցի ամփոփիչ եզրահանգումներում: Նշվել է, որ *ազատությունից զրկված անձանց միջև բռնության դեպքերի բարձր ցուցանիշը կարող է լինել քրեական ենթամշակույթի և ոչ ֆորմալ հիերարխիայի արդյունքը*⁵:

Քրեական ենթամշակույթի բացասական դրսևորումների վերաբերյալ 2017 թվականին «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության պատվերով իրականացվել է սոցիալական բնույթի հետազոտություն՝ կապված ազատությունից զրկված անձանց շրջանակում քրեական ենթամշակույթի ազդեցության, վերջիններիս և քրեակատարողական ծառայողների կողմից ենթամշակույթի ընդունման, ներգրավվածության մակարդակի և պատճառների հետ⁶:

Հաշվի առնելով քրեական ենթամշակույթի բնույթը և դրա ազդեցությունն ազատությունից զրկված անձանց միջև հարաբերությունների և առհասարակ քրեակատարողական համակարգի վրա՝ սույն հայեցակարգի նպատակն է վեր հանել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի գոյության բարենպաստ պայմանները բացառելու, ենթամշակույթի ազդեցության նվազեցման և դրա տարածման կանխարգելման հնարավոր ուղիները, ներկայացնել խնդիրների լուծմանն ուղղված համալիր առաջարկություններ:

Հայեցակարգը հասցեագրված է առաջին հերթին ՀՀ արդարադատության նախարարությանը, Քրեակատարողական ծառայությանը, քրեակատարողական հիմնարկների վարչակազմերին, ինչպես նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններին, քաղաքացիական հասարակությանը և ՀՀ քաղաքացիներին:

Հայեցակարգի առաջին գլխում քննարկվում են քրեական ենթամշակույթի տեսանկյունից գործնական խնդիրները և դրանց լուծումները: Երկրորդ գլուխն անդրադառնում է քրեակատարողական օրենսդրության ուսումնասիրություններին, վեր են հանվում օրենսդրական բացերը և խնդիրները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով խթանում են քրեական ենթամշակույթին կամ չեն նախատեսում դրա կանխարգելման համար բավարար կարգավորումներ:

Հարկ է շեշտել, որ հետապնդվող նպատակին հասնելու համար հայեցակարգում տեղ գտած թե՛ գործնական, թե՛ օրենսդրական առաջարկները պետք է իրականացնել պատշաճ զուգակցմամբ:

Կարևոր է նաև ընդգծել, որ քրեական ենթամշակույթի դեմ պայքարի ընթացքում անհրաժեշտ է ապահովել մարդու իրավունքների պատշաճ իրացումն ու օրինականության և իրավունքի առջև բոլորի հավասարության հիմնարար սկզբունքները:

⁵ Տե՛ս

https://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolNo=CAT/C/ARM/CO/4&Lang=En կայքէջում, կետ 31:

⁶ Տե՛ս նշված ուսումնասիրությունը

http://www.csi.am/sites/default/files/library/report_prison_subculture%20Arm.pdf կայքէջում:

Չնայած սույն հայեցակարգն անդրադառնում է միայն քրեակատարողական հիմնարկների ներսում քրեական ենթամշակույթի տարածման և ազդեցության խնդրին, այն կապված է նաև քրեակատարողական հիմնարկից դուրս՝ արտաքին աշխարհում ձևավորված հանցավորության և այլ հանգամանքների հետ, որոնք չեն հանդիսանում հայեցակարգի քննարկման առարկա:

ԳԼՈՒԽ 1. ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Քրեակատարողական հիմնարկներում այնպիսի երևույթների դեմ պայքարը, ինչպիսիք են՝ քրեական ենթամշակույթը, դրա տարածումը և ազդեցությունը, պետք է իրականացնել համակողմանի մոտեցմամբ, այսինքն՝ միևնույն ժամանակ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրական մակարդակում:

Այս մոտեցման կարևորագույն մասերից է կազմում գործող օրենսդրական կարգավորումների և նախատեսվող փոփոխությունների պայմաններում գործնական սկզբունքների այնպիսի համակարգի ապահովումը, որն ուղղված է քրեական ենթամշակույթի լայն տարածում ունեցող ազդեցության նվազեցմանը՝ ընդհուպ մինչև դրա լիովին բացառմանը:

Խնդիրների ուսումնասիրության արդյունքում կատարված առաջարկները վերաբերում են հետևյալ հարցերին՝

- 1) ազատությունից զրկելը՝ որպես բացառիկ միջոց,
- 2) քրեակատարողական համակարգի անձնակազմ,
- 3) ազատությունից զրկված անձանց հետ տարվող աշխատանքներ,
- 4) ազատությունից զրկված անձանց կրթություն և զբաղվածություն,
- 5) պահման ընդհանուր պայմաններ:

Պետք է նշել, որ քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ քայլեր ձեռնարկելու համար ստորև ներկայացված խնդիրների վերաբերյալ կատարված առաջարկները պետք է իրականացնել զուգակցմամբ սկզբունքով, քանի որ դրանք միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են:

1.1. Անձին ազատությունից զրկելը՝ որպես բացառիկ միջոց

Քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս անձինք բախվում են այնտեղ գոյություն ունեցող միջանձնային հարաբերությունների, արժեհամակարգի և վարքագծի կանոնների հետ, որոնք ընդունված են ազատությունից զրկված մյուս անձանց կողմից: Քրեակատարողական համակարգում արմատավորված ենթամշակույթն այսպես տարածում է իր ազդեցությունը քրեակատարողական հիմնարկ մուտք գործած անձանց նկատմամբ: Այս առումով, նույնիսկ այն անձինք, ովքեր երբևէ առնչություն չեն ունեցել ենթամշակույթի հետ, հայտնվում են դրա թիրախում և ուղղակի կամ անուղղակի կերպով ներգրավվում են դրա տարածման գործընթացին:

Քրեական ենթամշակույթի և դրա ազդեցության տարածումը կանխարգելելու տեսանկյունից կարևոր է հնարավորության սահմաններում սահմանափակել անձանց մուտքը քրեակատարողական հիմնարկներ: Այս հարցի քննարկման համար անհրաժեշտ

է անդրադառնալ Հայաստանում որպես խափանման միջոց կալանքի և ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կիրառությանը:

Այսպես, վիճակագրության համաձայն՝ 2017 թվականի ընթացքում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2363 միջնորդություններից 2220-ը (**93,9%**) բավարարվել է⁷: Հարաբերակցության տեսանկյունից իրավիճակն էականորեն չի փոխվել նաև 2018 թվականի առաջին կիսամյակի վիճակագրությունում, որի համաձայն՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 1095 միջնորդություններից 1031 (**94,15%**) բավարարվել է: Նույն ժամանակահատվածում կալանքի ժամկետը երկարացնելու 627 միջնորդություններից 599-ը (**95,5%**) բավարարվել է, իսկ գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 448 միջնորդություններից 383-ը (**85,4%**) մերժվել է⁸:

Վիճակագրության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միատեսակ պրակտիկան ունի շարունակական արդիականություն, որն իր հերթին մի շարք խնդիրների սկզբնաղբյուր է հանդիսանում:

2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներում նույնպես բարձրացվել են կալանքի կիրառության հետ կապված խնդիրներ: Այդպիսի բողոքներ ստացվել են հիմնականում կալանավորված անձանցից և նրանց պաշտպաններից ու ազգականներից: Մասնավորապես, այդ բողոքների գերակշռող մասը վերաբերել է դատարանների կողմից կալանքի կիրառության միջնորդությունները բավարարելու ոչ իրավաչափությանը՝ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը, ինչպես նաև խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության հարցը լուծելիս նշանակություն ունեցող հանգամանքները պատշաճ քննարկման առարկա չդարձնելուն: Բացի այդ, մի շարք դեպքերում կալանավորված անձինք իրենց բողոքներում նշել են, որ կալանքը կիրառելիս դատարանների կողմից հաշվի չեն առնվել իրենց առողջական վիճակը, այդ թվում՝ հաշմանդամությունը, մեծահասակ լինելը, ընտանեկան դրությունը, ինչպես նաև իրենց խնամքին մանկահասակ երեխաներ և տարեց ծնողներ ունենալու հանգամանքները⁹:

Հարցի կապակցությամբ պետք է շեշտել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սկզբունքային է համարում կալանքը՝ որպես անձի ազատության իրավունքի

⁷ Տե՛ս «ՀՀ դատարանների 2016-2017թթ. գործունեության վերաբերյալ համեմատական վիճակագրական վերլուծությունը»

http://www.court.am/arm/left/statistics/%D5%80%D5%A1%D5%B4%D5%A5%D5%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BE%D5%A5%D6%80%D5%AC%D5%B8%D6%82%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf կայքէջում:

⁸ Տե՛ս http://www.court.am/index.php?link=arm/left/statistics/2018_1/crim/by_court.htm կայքէջում:

⁹ Տե՛ս «2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումը

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/b5220dd0b83b420a5ab8bb037a1e02ca.pdf> կայքէջում, էջ 228:

սահմանափակում վերջին կամ ծայրահեղ միջոց (last resort) կիրառելը¹⁰ և կալանքի կիրառությունը միայն այն դեպքում, երբ ներգործության ուժով նվազ միջոցները չեն կարող ապահովել հետապնդվող իրավաչափ նպատակը¹¹:

Ինչ վերաբերում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կիրառմանը, վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2017 թվականին 2410 անձի նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատավճիռներից 1410 անձի նկատմամբ (58,5%) նշանակվել է ազատազրկման ձևով պատիժ, 181 անձի նկատմամբ (7,5%)՝ կալանքի ձևով, 1 անձի նկատմամբ (0,1%)՝ կարգապահական գումարտակում պահելու ձևով: Այսինքն, ազատությունից զրկելու հետ կապված պատիժները կազմել են նշանակված պատիժների 66%-ը (2016 թվականին դրանք կազմել են նշանակված պատիժների 66,2%-ը)¹²:

Հարկ է նաև նշել, որ ինչպես 2016 թվականին, այնպես էլ 2017 թվականին դատապարտված անձանց թվում որոշակի նվազումներով հանդերձ զգալի թիվ են կազմել գողության, առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, ինչպես նաև զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործություններից՝ ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելու համար դատապարտվածները¹³:

Ազատությունից զրկումն իր հետ առաջ է բերում այլ իրավունքների էական սահմանափակումներ, ինչը սոցիալական առումով բացասական հետևանքներ է առաջացնում ինչպես ազատությունից զրկված անձի, այնպես էլ նրա ընտանիքի անդամների և ազգականների համար: Ընտանիքի, աշխատավայրի և, առհասարակ, հասարակության հետ կայուն կապը նույնիսկ կարճ ժամանակահատվածով կորցնելը կարող է երկարաժամկետ և բացասական ազդեցություն ունենալ անձի վրա:

Մյուս կողմից, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազատությունից զրկելը կարող է ունենալ քրեածին ազդեցություն: Այն կարող է ստեղծել նոր հանցագործությունների (այդ թվում՝ առավել ծանր) կատարման, ինչպես նաև քրեական ենթամշակույթի ստեղծման համար բարենպաստ միջավայր¹⁴: Իսկ արդեն գոյություն ունեցող և արմատավորված քրեական ենթամշակույթի պայմաններում քրեակատարողական հիմնարկ մուտք գործած անձն անխուսափելիորեն բախվելու է դրա հետ, որի ազդեցությունն ուղեկցելու է վերջինիս ազատությունից զրկված լինելու ողջ

¹⁰ Տե՛ս Մեհմետ Հասան Ալտանն ընդդեմ Թուրքիայի (Mehmet Hasan Altan v Turkey) գործով 2018 թվականի մարտի 20-ի վճիռը, զանգատ թիվ 13237/17, կետ 211:

¹¹ Տե՛ս Ջունդիկսն ընդդեմ Լատվիայի (Djundiks v Latvia) գործով 2014 թվականի կոկտեմբերի 13-ի վճիռը, զանգատ թիվ 14920/05, կետ 89:

¹² Տե՛ս 7-րդ հղումը:

¹³ Տե՛ս նույն տեղում:

¹⁴ Տե՛ս «Penal Policy with Imprisonment as a Last Resort», IPRT, 2009, http://www.iprt.ie/files/IPRT_Position_Paper_5_-_Penal_Policy_with_Imprisonment_as_a_Last_Resort.pdf

կայքէջում, էջ 6:

ընթացքում և նույնիսկ դրանից հետո: Խնդիրն առավել սուր է անազատության մեջ գտնվող անչափահասների դեպքում, ովքեր առավել հակված են ենթարկվելու իրենց շրջապատող միջավայրի բացասական ազդեցությանը: Այս տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում անչափահասին ազատությունից զրկելը՝ որպես պատժի բացառիկ միջոց նախատեսելը, որ կարող է նշանակել միայն այն դեպքում, երբ ոչ մի այլ միջոց չի կարող ապահովել պատժի նպատակների իրականացումը:

Հաշվի առնելով ազատությունից զրկելու հետ կապված մի շարք բացասական հանգամանքները և դրա կապակցությամբ դատական պրակտիկան՝ անհրաժեշտ է իրականացնել օրենսդրության վերանայում և նոր, առավել ճկուն իրավական մեխանիզմների ներդրում, մասնավորապես՝ այլընտրանքային պատիժների և խափանման միջոցների կիրառման կապակցությամբ:

1.2. Քրեակատարողական համակարգի անձնակազմ

Քրեակատարողական հիմնարկի անձնակազմը քրեակատարողական համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկն է, որը կոչված է իրականացնել քրեակատարողական օրենսդրության առջև դրված մի շարք խնդիրներ: Այս կարևոր աշխատանքը կատարելու ընթացքում քրեակատարողական ծառայողները բախվում են բազմաթիվ դժվարությունների և մարտահրավերների, որոնց կապակցությամբ ձեռնարկված քայլերը հանդիսանում են անձնակազմի պրոֆեսիոնալիզմի ցուցանիշ:

Հաշվի առնելով, որ քրեակատարողական հիմնարկի անձնակազմը համակարգի կարևորագույն տարրերից է՝ անհրաժեշտ է բավարար մակարդակի ջանքեր գործադրել և ռեսուրսներ ներդնել՝ դրա հավաքագրման, անձնակազմի համար սոցիալական երաշխիքների և աշխատանքային պատշաճ պայմանների ապահովման և պարբերաբար վերապատրաստումներ կազմակերպելու ուղղությամբ:

Քրեակատարողական հիմնարկի վարչակազմն այլ գործառույթների հետ մեկտեղ կոչված է ապահովելու կարգապահությունը հիմնարկում: Ընդ որում՝ սա պետք է իրականացվի միայն հիմնարկի վարչակազմի կողմից: Այնուամենայնիվ, ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ իր զեկույցներում արձանագրել է *քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի կողմից իրենց իրավասությունը բանտային հիերարխիայի բարձրագույն կարգավիճակում գտնվող ազատությունից զրկված անձանց (այսպես կոչված «նայողներ») մասնակիորեն պատվիրակելու ընդհանուր միտում, ովքեր իրականացնում են ազատությունից զրկված անձանց շրջանակում հսկողություն և պահպանում են կարգուկանոնը*: Այս կապակցությամբ ԽԿԿ-ն կոչ է արել Հայաստանի իշխանություններին *վերջ դնել քրեակատարողական հիմնարկներում կարգուկանոնը պահպանելու հարցում ոչ ֆորմալ բանտային հիերարխիային ապավինումը*, և շեշտել է, որ

ազատությունից զրկված ոչ մի անձ չպետք է իշխանության գործառույթներ տարածի ազատությունից զրկված այլ անձանց նկատմամբ¹⁵:

Քրեական ենթամշակույթի ներկայացուցիչների կողմից կարգապահության ապահովման գործառույթի իրականացումը և քրեակատարողական հիմնարկի վարչակազմի հետ վերջիններիս համագործակցության բացառման համար անհրաժեշտ է ուշադրություն բևեռել հետևյալ հարցերին՝

1) քրեակատարողական հիմնարկի վարչակազմի համալրվածություն և հաստիքների բավարար քանակ,

2) ծառայողների սոցիալական երաշխիքներ և աշխատանքային պայմաններ,

3) մասնագիտական վերապատրաստումներ:

Վերոնշյալ հարցերն արտացոլում են քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի կարիքներն իրենց պարտականությունները պատշաճ իրականացնելու նպատակով:

1) Հաստիքների համալրումն ու բաշխումը

Քրեակատարողական հիմնարկներում անվտանգության և կարգապահության ապահովման համար կարևորագույն երաշխիքներից է համապատասխան որակավորում ունեցող անձնակազմի բավարար քանակի առկայությունը: Քրեական ենթամշակույթի ազդեցությունը կապված է հիմնարկների վարչակազմերի կողմից իրենց պարտականությունները ոչ պատշաճ իրականացնելու հետ, ինչը ստեղծում է ենթամշակույթի համար բարենպաստ, իսկ հիմնարկի համար՝ ոչ ապահով միջավայր:

Քրեակատարողական հիմնարկներում թափուր հաստիքների համալրումը տարիներ շարունակ լուրջ խնդիր է եղել, որը շարունակում է արդիական մնալ: Քրեակատարողական ծառայության թափուր հաստիքների ուսումնասիրությունը փաստում է հատկապես հիմնարկների անվտանգության ապահովման, պահպանության ապահովման և բժշկական սպասարկման բաժիններում աշխատակիցների անհրաժեշտությունը: Այսպես, 2018 թվականի օգոստոսի 16-ի դրությամբ Քրեակատարողական ծառայության թափուր 197 հաստիքներից 88-ը՝ անվտանգության պահպանման բաժնի, 24-ը՝ պահպանության ապահովման բաժնի և 31-ը՝ բժշկական սպասարկման բաժնի հաստիքներ են¹⁶:

Քրեակատարողական հիմնարկում աշխատանքը ծանր է թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես, հաճախ ծառայողները ստիպված են լինում աշխատել բարդ աշխատանքային և կենցաղային պայմաններում, փակ մեկուսացված տարածքում՝ կատարելով նաև թափուր մնացած աշխատատեղերի պատճառով բացակայող աշխատակիցների

¹⁵ Տե՛ս

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806bf46f> կայքէջում, կետեր 53, 54:

¹⁶ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության <https://ced.am/> կայքէջում, թափուր պաշտոններ:

պարտականությունները, ինչը տարիների ընթացքում չի կարող չարտահայտվել ծառայողների տրամադրության, աշխատանքային մոտիվացիայի և արդյունավետության վրա:

Քրեակատարողական հիմնարկներն անհրաժեշտ է համալրել պատասխանատու, անձնային բարձր որակներով օժտված բավարար թվով մասնագետներով և ծառայողներով: Ուստի, խիստ անհրաժեշտություն է առաջանում մշակելու կադրերի գրավման քաղաքականություն, որը միտված կլինի երիտասարդ մասնագետների ներգրավմանը, ինչը նոր ուժ և մոտեցումներ կբերի հիմնարկ: Համադրություն պետք է լինի փորձառու և նոր աշխատակիցների միջև, որպեսզի վերջիններս միմյանց փոխլրացնեն:

Քրեակատարողական հիմնարկներում կադրերի համալրվածությունն ապահովելու համատեքստում կարևոր է հիմնարկում աշխատանքի գրավչության վերաբերյալ, ծառայողների մոտ իրենց կողմից կատարվող աշխատանքի կարևոր և նշանակալի լինելու համոզմունքի ձևավորումը՝ բարձրացնելով աշխատակիցների մոտիվացիան: Այս խնդրի լուծումը կարող են լինել նրանց աշխատանքը պատշաճ գնահատելը, խրախուսելը և հասարակության շրջանում քրեակատարողական ծառայողի աշխատանքի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորումը:

Կարևոր բաղադրիչ է նաև պաշտոնների բաշխումն ու աշխատանքային պարտականությունների սահմանումը: Դիտարկումները ցույց են տալիս, որ քրեակատարողական հիմնարկներում համաչափ չէ քրեակատարողական ծառայող-ազատությունից զրկված անձ հարաբերակցությունը¹⁷: Հարցի կապակցությամբ պետք է նշել, որ, օրինակ, Սկանդինավյան երկրներում, որտեղ ազատությունից զրկված անձանց ամենացածր ցուցանիշն է արձանագրված, մեկ ծառայողին բաժին է ընկնում 1-1.5 ազատությունից զրկված անձ (Իսլանդիա, Ֆինլանդիա, Դանիա), իսկ Շվեդիայում և Նորվեգիայում ծառայողների թիվն անգամ գերազանցում է ազատությունից զրկված անձանց թիվը¹⁸: Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարն իր զեկույցներում ևս անդրադարձել է քրեակատարողական հիմնարկների եվրոպական երկրներում գործող ազատությունից զրկված անձ-քրեակատարողական հիմնարկի հսկիչ հարաբերակցությունը, որն ընդհանուր առմամբ հանգում է **1 քրեակատարողական ծառայող 4 ազատությունից զրկված անձին**¹⁹:

¹⁷ Տե՛ս «Քրեակատարողական համակարգում ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի արտահերթ հրապարակային զեկույցը

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/b1290ae68d58b1d1d0c065ac84c7827b.pdf> կայքէջում, էջեր 59-61:

¹⁸ Տե՛ս Ragnar Kristoffersen, “Correctional Statistics of Denmark, Finland, Iceland, Norway and Sweden 2011 – 2015”, http://www.rikosseuraamus.fi/material/attachments/rise/julkaisut-muut/t3QTT5R1/Nordic_Statistics_2011_2015.pdf կայքէջում, էջ 51:

¹⁹ Տե՛ս Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի՝ Ռոմինիայի վերաբերյալ 2002-2005թթ. զեկույցը <https://rm.coe.int/16806db7b0> կայքէջում, կետ 14:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել է նաև, որ այն քրեակատարողական հիմնարկներում, որտեղ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կազմակերպման գործընթացում ներգրավված է մեկական հոգեբան, ազատությունից զրկված անձանց թիվը շատ փարբեր է (նվազագույնը՝ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում՝ 60, իսկ առավելագույնը՝ «Կոշ» քրեակատարողական հիմնարկում՝ 640): Ուստի, անհրաժեշտ է պահպանել քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց և հոգեբանների թվային հարաբերակցությունը, ինչն էլ հոգեբանների կատարած աշխատանքի արդյունավետության պակասի պատճառ է²⁰:

Համաձայն փորձագետների՝ մեկ հոգեբան կարող է աշխատել առավելագույնն ազատությունից զրկված 50 անձի հետ²¹:

Քրեակատարողական ծառայող - ազատությունից զրկված անձ հարաբերակցության կապակցությամբ անհրաժեշտ է համապարփակ գնահատում անցկացնել, թե որ քրեակատարողական հիմնարկին ինչ և ինչ քանակի մասնագետներ են անհրաժեշտ՝ հաշվի առնելով հիմնարկի լրակազմը և պահվող անձանց դասակարգումը: Այս գնահատումների արդյունքում պետք է փոփոխություններ կատարել հիմնարկների հաստիքակազմերում քրեակատարողական հիմնարկի բնականոն գործունեությունը և վարչակազմի լիազորությունների պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով:

2) Մասնագիտական վերապատրաստում և որակավորման բարձրացում

Քրեակատարողական հիմնարկների անձնակազմը համալրելուց և բաշխելուց հետո կարևոր է երաշխավորել կադրերի ուսուցումը, պարբերական վերապատրաստումը, ազատությունից զրկված անձանց հետ աշխատելու հմտությունների զարգացումը, այդ թվում՝ ազատությունից զրկված անձանց հսկողությունը, կոնֆլիկտների հարթումը, բռնության կանխարգելումը, անհրաժեշտության դեպքում համաչափ ուժի կիրառումը և այլն:

Որքան բարձր է քրեակատարողական ծառայողի մասնագիտական պատրաստվածությունը, այնքան բարձր է նրա կողմից խնդիրները հայտնաբերելու և դրանց ժամանակին պատշաճ արձագանքելու հավանականությունը:

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման առնվազն 3 տարին մեկ և հարուկ ուսուցման՝ առնվազն տարին մեկ:

²⁰ Տե՛ս

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/59297c7b4276c9dbf19cd1f1cfd92a8.pdf> կայքէջում, էջեր 46-47:

²¹ Տե՛ս «Ազատագրված մասնաբաժանների մոտ փոխվում է հոգեկան պատկերը» հոդվածը <https://www.aravot.am/2009/11/25/351942/> կայքէջում:

Պարտականությունները պատշաճ կատարման համար անհրաժեշտ է պարբերաբար ապահովել քրեակատարողական ծառայողների մասնագիտական զարգացումը: Դասընթացների արդյունավետության բարձրացման նպատակով պետք է հաշվի առնել ծառայողների կարիքները:

Նպատակահարմար կարող է լինել համագործակցությունը նաև ԲՈՒՀ-երի համապատասխան ֆակուլտետների հետ: Այսպես, բժշկական ստորաբաժանումների թափուր հաստիքների համալրման համար Քրեակատարողական ծառայությունը 2015 թվականից համագործակցություն է հաստատել Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի հետ²²: Նման մոտեցումը ողջունելի է, և աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է խորացնել այսպիսի համագործակցությունները:

Կարևոր է նաև փորձի փոխանակման պարբերական հանդիպումների կազմակերպումը:

3) Սոցիալական երաշխիքներ և աշխատանքային պայմաններ

Միայն հմուտ մասնագետներով համալրվածությունը բավարար չէ ազատությունից զրկված անձանց հետ արդյունավետ աշխատանքի համար: Քրեակատարողական հիմնարկի բնականոն աշխատանքի գլխավոր երաշխիքներից է նվիրվածությունն աշխատանքին և մոտիվացիան: Աշխատանքին անհրաժեշտ վերաբերմունք ձևավորելու հարցում առաջնային է աշխատանքի համար պատշաճ վարձատրությունը: Բացի նրանից, որ ցածր վարձատրությունը խոչընդոտում է մասնագետների ներգրավմանը և կադրերի արտահոսքի պատճառ է դառնում, դա հղի է նաև լուրջ կոռուպցիոն ռիսկերով, որի մասին վկայում են պարբերաբար հայտնաբերվող, ծառայողների կողմից կատարվող հանցագործությունները:

Քրեակատարողական ծառայողները պետք է նաև ապահովված լինեն սոցիալական այլ երաշխիքներով. պետք է պահպանվեն աշխատակիցների՝ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային գրաֆիկը, արտաժամյա աշխատանքային վարձատրության պահանջները, ինչպես նաև իրենց բնակության վայրից հեռու գտնվող քրեակատարողական ծառայողներն ապահովված լինեն փոխադրման ծառայությամբ՝ իրենց աշխատանքն ավարտելու փաստացի ժամին:

Միաժամանակ, անհրաժեշտ է ապահովել քրեակատարողական ծառայողների պատշաճ աշխատանքային պայմանները, մասնավորապես՝ վերջիններիս աշխատասենյակների և այն տարածքների պայմանների բարեկարգումը, որտեղ իրականացվում է ծառայությունը:

Հմուտ անձնակազմի դեպքում կաճի ազատությունից զրկված անձանց վստահությունը վարչակազմի հանդեպ, հիմնարկներում կձևավորվի փոխվստահության

²² Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության <https://ced.am> կայքէջում:

մթնոլորտ ազատությունից զրկված անձանց և անձնակազմի միջև, ինչը կսահմանափակի քրեական ենթամշակույթի դրսևորման հնարավորությունները:

Ամփոփելով վերոգրյալը, անհրաժեշտ է՝

✓ գնահատել, թե որ քրեակատարողական հիմնարկն ինչ և ինչ քանակի մասնագետների կարիք ունի, գնահատման հիման վրա ավելացնել քրեակատարողական հիմնարկների համապատասխան հաստիքները՝ հաշվի առնելով միջազգայնորեն ընդունված չափանիշները.

✓ մշակել կադրերի ներգրավման հստակ ընթացակարգ, խթանել մասնագիտական բարձր որակավորում ունեցող անձանց աշխատանքը քրեակատարողական հիմնարկներում.

✓ միջոցներ ձեռնարկել քրեակատարողական հիմնարկների համալրվածությունն (այդ թվում՝ սոցիալական աշխատողներ, հոգեբաններ) ապահովելու ուղղությամբ.

✓ կազմակերպել պարբերական վերապատրաստման դասընթացներ քրեակատարողական ծառայողների և քրեակատարողական համակարգում ընդգրկված այլ աշխատակիցների համար՝ նրանց մասնագիտական կարիքներին համապատասխան, քրեական ենթամշակույթի և դրա ազդեցությունը սահմանափակելու պրակտիկ մեթոդների վերաբերյալ.

✓ նախատեսել մասնագետների (մասնավորապես՝ հոգեբանների և սոցիալական աշխատողների) պարբերաբար հանդիպումներ և քննարկումներ՝ փորձի փոխանակման և աշխատանքային իրավիճակների քննարկման նպատակով.

✓ քրեակատարողական ծառայողներին և քրեակատարողական համակարգում ընդգրկված այլ աշխատակիցներին ապահովել պատշաճ վարձատրությամբ և սոցիալական այլ երաշխիքներով.

✓ բարելավել վերջիններիս աշխատանքային պայմանները, ապահովել հերթապահության և վարձատրության կազմակերպումը ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

1.3. Ազատությունից զրկված անձանց հետ տարվող աշխատանքներ

Քրեակատարողական հիմնարկի գործունեության հենաքարը պետք է լինի հարգալից, մարդու իրավունքների վրա հիմնված, էթիկայի կանոնների պահպանմամբ վերաբերմունքն ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի նկատմամբ, ինչը կարող է լինել փոխվստահության մթնոլորտի ձևավորման և ազատությունից զրկված անձի վարքագծի փոփոխության նախապայման, որպես հետևանք՝ հիմնարկի արդյունավետ կառավարման գրավական, և որպես արդյունք՝ քրեական ենթամշակույթի դերակատարության սահմանափակում:

Պատժի կարևոր նպատակներից է պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, ինչին հասնելու համար շատ կարևոր են քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց հետ տարվող աշխատանքները:

Ազատությունից զրկված անձանց հետ տարվող պարբերական և արդյունավետ աշխատանքները մեծ ազդեցություն կունենան քրեական ենթամշակույթի ազդեցության տարածման կանխարգելման համար, քանի որ ուղղված են անձանց մոտ մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ հարգալից վերաբերմունք ձևավորելուն և օրինապահ վարքագիծը խթանելուն: Ազատվելու պահին դատապարտյալը պետք է հնարավորինս բարելավված սոցիալական, հոգեկան և բարոյական վարքագիծ ունենա:

Քրեակատարողական հիմնարկ առաջին անգամ ընդունվողները կարող են լինել ինչպես ճնշված, վախեցած, այնպես էլ հակառակը՝ ագրեսիվ, կամ թմրանյութերի ազդեցության տակ: Կարևոր է ճիշտ գնահատել անձանց քրեածին բնութագրիչները, նրանց քրեական ենթամշակույթին հարելու հակումները և, ըստ այդ գնահատման, տեղաբաշխման վերաբերյալ որոշում կայացնել, մշակել վերասոցիալականացման անհատական պլան, որը հաջողությամբ կատարելու դեպքում, պարբերաբար վերագնահատման պայմաններում, դատապարտյալը հնարավորություն կունենա փոխել իր պատժի կատարման ռեժիմը կամ, առհասարակ, պայմանական վաղաժամկետ ազատվել պատժից:

Անհատական պլանները պետք է ներառեն կրթության, հմտությունների, մասնագիտության ձեռքբերման կապակցությամբ հոգեբանական, սոցիալական և իրավական անընդհատ աշխատանք ազատագրվման ամբողջ ընթացքում՝ նախապատրաստելով անձանց դիմակայելու ազատվելուց հետո հնարավոր դժվարություններին՝ պայմանավորված կենսական կարիքները հոգալու անհրաժեշտությամբ, ինչպես նաև հնարավոր խտրականությամբ և խարանձամբ:

Ջանքեր պետք է գործադրվեն ազատությունից զրկված բոլոր անձանց անհատական ուղղման պլաններով նախատեսված միջոցներին ներգրավելու համար: Այդ ընթացքում հատկապես կարևոր է համապատասխան սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների շարունակական անցկացումն այն անձանց հետ, ովքեր չեն առնչվում քրեական ենթամշակույթի հետ կամ «մերժում» են այն: Այս անձանց օրինապահ վարքագիծ դրսևորելու և իր հետ տարվող աշխատանքներում մասնակցելու համար խրախուսելը կարող է մեծ ազդեցություն ունենալ ինչպես վերջիններիս իրավահպատակ վարքագծի դրսևորման, այնպես էլ ազատությունից զրկված մյուս անձանց մոտ ուղղման միջոցներին մասնակցելու ձգտում առաջացնելու համար: Սա ուղղված է քրեական ենթամշակույթի ազդեցության նվազեցմանը և ազատությունից զրկված անձանց դրա հետ առնչությունից զերծ պահելուն:

Անհրաժեշտ է նաև աշխատանքներ իրականացնել՝ փոխելու հասարակության շրջանում դատապարտյալների նկատմամբ կարծրատիպային և նախապաշարմունքային վերաբերմունքը: Շատերն այն համոզման են, որ հանցագործը պետք է տառապի, նրան

զրկելն իրավունքներից ճիշտ է, նախկին դատապարտյալներին աշխատանքի չընդունելը՝ արդարացի: Այս համատեքստում վերասոցիալականացման անհատական պլանի կարևոր բաղադրիչ պետք է դառնա նաև հաշտարարությունը, որը կարող է միաժամանակ մի քանի խնդիր թիրախավորել՝ հանցագործություն կատարողը ստանում է զղջալու և իր հանցանքն անմիջապես տուժողին փոխհատուցելու հնարավորություն, իսկ տուժողը՝ հանցագործություն կատարողին ներելու, կրած վնասների փոխհատուցում ստանալու հնարավորություն: Սա, ի թիվս այլնի, կարող է փոխել տուժողի վերաբերմունքը դատապարտյալի նկատմամբ, մասնավորապես, և ազատությունից զրկված անձանց նկատմամբ, առհասարակ:

«Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հաշտարարության իրականացում, սակայն դրույթները վերաբերում են միայն Պրոբացիայի շահառուներին²³: Նպատակահարմար կլինի նախատեսել նաև հաշտարարության ինստիտուտ ազատությունից զրկված անձանց համար՝ սահմանելով հստակ չափանիշներ, թե որ դեպքում է հնարավոր սկսել հաշտարարության գործընթաց, իսկ որ դեպքերում՝ ոչ, ինչպես նաև նախատեսել ընթացակարգ, որը հաշտարարության գործընթացի հաջողության դեպքում կնախատեսի պատժի կրման ժամկետի կրճատում, ռեժիմի մեղմում կամ պայմանական վաղաժամկետ ազատում:

Միջազգային փորձը ցույց է տալիս հաշտարարության ինստիտուտի արդարացվածությունը վերականգնողական արդարադատության տեսանկյունից: Օրինակ՝ համաձայն **Կանադայի** Ուղղիչ ծառայության տվյալների՝ զոհի հետ դեմ առ դեմ հանդիպումներում ներգրավված հանցագործների 89 տոկոսը նոր հանցագործություն չի կատարել²⁴: Հաշտարարության ինստիտուտի արդյունավետությունը հաստատում են նաև հետազոտությունները²⁵:

Հաշտարարության դերակատարությունը որոշ եվրոպական երկրներում (**օրինակ՝ Ավստրիա, Գերմանիա, Չեխիա**) վերապահված է Պրոբացիայի ծառայությանը, այլ երկրներում (**օրինակ՝ Ֆինլանդիա, Նորվեգիա**)՝ այն առանձին ինստիտուտ է:

Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

✓ **քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու պահից ազատությունից զրկված անձանց հետ իրականացնել սոցիալ, հոգեբանական և իրավական շարունակական աշխատանքներ.**

²³ Տե՛ս «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքի 29-34-րդ հոդվածներ:

²⁴ Տե՛ս “Restorative Opportunities - Victim-Offender Mediation Services 2016-2017, Correctional Results for Face-to-Face Meetings” Կանադայի ուղղիչ ծառայության <http://www.csc-scc.gc.ca/restorative-justice/003005-1002-en.shtml> կայքէջում:

²⁵ Տե՛ս, օրինակ, ՅՈՒՆԻՍԵՖԻ, Ալբանիայի արդարադատության նախարարության, Նորվեգիայի հաշտարարության ծառայության, Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության և «Հակամարտությունների կարգավորման և վեճերի հարթման» հիմնադրամի համատեղ աշխատանքը “Implementing alternative measures to detention in penal cases – Introducing and sharing experiences on restorative justice and victim offender mediation application for juveniles and beyond”, https://www.unicef.org/albania/RJ_forum_-_publication.pdf կայքէջում:

- ✓ գնահատել վերջիններիս վերաբերմունքը քրեական ենթամշակույթի նկատմամբ.
- ✓ համապատասխան գնահատումների հիման վրա կազմել անձի ուղղման և վերասոցիալականացման անհատական պլան.
- ✓ խրախուսել սոցիալական, հոգեկան և բարոյական առողջ վարքագիծը՝ հիմնված համամարդկային արժեքների վրա.
- ✓ խրախուսել իրականացվող աշխատանքներում ներգրավվող և քրեական ենթամշակույթի հետ առնչություն չունեցող անձանց.
- ✓ ապահովել շարունակական հոգեբանական աշխատանք՝ նախապատրաստելով անձին ազատմանը և հնարավոր դժվարություններին ու դրանց հաղթահարմանը.
- ✓ մշակել և ներդնել ազատությունից զրկված անձանց համար հաշտարարության ինստիտուտի գործարկման ընթացակարգ.
- ✓ զարգացնել և ընդլայնել Պրոբացիայի պետական ծառայության՝ հաշտարարի դերակատարությունը:

1.4. Ջբաղվածություն և կրթություն

Կրթությունը, պահանջարկ ունեցող մասնագիտական հմտությունների ուսուցանումը, քրեակատարողական հիմնարկում զբաղվածության ապահովումը և զբաղվածության հեռանկարների ստեղծումը, մտահորիզոնի ընդլայնումը, ճիշտ արժեքային համակարգի դաստիարակությունը և վերասոցիալականացմանն ուղղված ծրագրերում ներգրավելուն անձին խրախուսելն ու մոտիվացնելն ազատությունից զրկված անձանց այլընտրանքների հնարավորություն է ընձեռում, և մյուս միջոցառումների հետ կիրառվելիս կրճատում է քրեական ենթամշակույթի դրսևորման հնարավորությունները և գերծ է պահում դրա հետ առնչությունից:

1) Աշխատանք

Քրեական ենթամշակույթի դերակատարության նվազեցման համատեքստում կարևոր է հագեցված և իմաստավորված առօրյայի ապահովումը: Աշխատանքն այդ խնդրի լուծման կարևոր բաղադրիչներից է, քանի որ կրճատվում է պարապուրդն օրվա ընթացքում: Աշխատանքի կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ շատերը դիմում են հանցագործության օրինական եկամուտ ստանալու հնարավորություն չունենալու պատճառով: Աշխատանքը կարևոր նշանակություն ունի նաև ազատությունից զրկված անձի վերասոցիալականացման տեսանկյունից: Շատերի համար քրեակատարողական հիմնարկում գտնվելու ժամանակը կարող է լինել անձի՝ մասնագիտական հմտություններ ձեռքբերելու և/կամ կանոնավոր աշխատանք ունենալու առաջին հնարավորությունը: Աշխատանքն անձի մոտ դաստիարակում է հարգալից վերաբերմունք աշխատանքի նկատմամբ, նա վարժվում է աշխատանքային օրվա

ռեժիմին, վստահություն է առաջացնում, որ ազատվելուց հետո կկարողանա ապահովել իր զբաղվածությունը: Այս ամենը պահանջում է, որ քրեակատարողական հիմնարկում առաջարկվող աշխատանքները հնարավորություն ընձեռեն ձեռք բերելու պահանջարկ ունեցող հմտություններ և գիտելիքներ:

2017 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում վճարովի հիմունքներով ընդգրկված է եղել 201 դատապարտյալ, իսկ իրենց համաձայնությամբ չվարձատրվող աշխատանքներում՝ 238, այն դեպքում, երբ քրեակատարողական հիմնարկներում պահվել է ազատությունից զրկված 3549 անձ: Ստացվում է, որ աշխատանքներում ներգրավված է ազատությունից զրկված անձանց մոտ 12 տոկոսը, ինչը բավարար ցուցանիշ համարել չի կարելի²⁶:

Այս հարցում պետության՝ որպես պատվիրատուի ներգրավվածությունը կարող է զգալի լինել: Օրինակ՝ **Հարավային Աֆրիկայում** պետության կարիքների համար անհրաժեշտ գույքը պատրաստվում է ազատությունից զրկված անձանց կողմից²⁷, նույն պրակտիկան գործում է նաև **Կանադայում**²⁸: Ազատությունից զրկված անձինք կարող են ներգրավվել նաև հանրային նշանակություն ունեցող աշխատանքներում, ինչպիսիք են, օրինակ, սոցիալական հաստատությունների, բանակի կարիքների համար որոշակի ապրանքների պատրաստումը, գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավվումը և այլն:

Հաշվի առնելով աշխատանքի կարևորությունը և դրա բարենպաստ արդյունքները՝ պետք է գործուն քայլեր իրականացնել ազատությունից զրկված անձանց՝ քրեակատարողական հիմնարկներում տեխնիկատնտեսական և հնարավոր այլ աշխատանքներում ներգրավվածությունը բարձրացնելու ուղղությամբ:

2) Կրթություն

Ազատությունից զրկված անձանց քրեական ենթամշակույթի հետ առնչությունից զերծ պահելու համար անչափ կարևոր բաղադրիչ է ազատությունից զրկված անձանց կրթության իրավունքի իրացման ապահովումը:

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվետվության համաձայն՝ 2016 թվականի սեպտեմբերից 2017 թվականի սեպտեմբերը «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի հետ համատեղ իրականացրել է

²⁶ Տե՛ս

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/59297c7b4276c9dbf19cd1f1cfcd92a8.pdf> կայքէջում, էջ 86:

²⁷ Տե՛ս “Prisoners set to earn money” <https://www.sowetanlive.co.za/news/2012-11-20-prisoners-set-to-earn-money/> կայքէջում:

²⁸ Տե՛ս “Job training program for inmates stuck in the past, says prison watchdog” <https://www.cbc.ca/news/canada/nova-scotia/prison-training-workforce-rehabilitation-inmates-1.3953592>

կայքէջում:

«Խեցեգործություն և խեցեգործության թրծման, ներկման տեխնոլոգիա», «Ժամանակակից կիրառական արվեստ», «Փայտամշակում և փայտի գեղարվեստական փորագրություն», «Համակարգչային հմտությունների ուսուցում» և «Ռուսաց լեզվի տարրական գիտելիքներ» դասընթացներ, որոնց մասնակցել է 48 դատապարտյալ²⁹: ՊՈԱԿ-ի կողմից գեղագիտական դաստիարակության կրթության ծրագրերով իրականացվել են դասընթացներ, որին մասնակցել են 16 կալանավորված անձ և/կամ դատապարտյալ անչափահաս, 35 կին դատապարտյալ: «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում իրականացվող դասընթացներին մասնակցել են 90 դատապարտյալ:

Նշված թվերը ցույց են տալիս, որ ազատությունից զրկված անձանց կրթական ծրագրերով ապահովումը բավարար մակարդակի չէ, ուստի պետք է շարունակական քայլեր ձեռնարկել ազատությունից զրկված անձանց կրթությունն ապահովելու, կրթական ավելի շատ ծրագրեր կազմակերպելու և դրանց ազատությունից զրկված անձանց ներգրավելու կապակցությամբ:

Հարկ է նաև նշել, որ հատուկ ուշադրության կենտրոնում պետք է պահել ազատությունից զրկված անչափահասների կրթության (այդ թվում՝ միջնակարգ) իրավունքի իրացման ապահովումը: Այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ապահովված չէ ազատությունից զրկված անչափահաս անձանց միջնակարգ կրթությունը³⁰:

Ելնելով ազատությունից զրկված անձանց կրթության ապահովման կարևորությունից՝ անհրաժեշտ է.

✓ **մոտիվացնել և խրախուսել մասնակցությունը կրթական ծրագրերին՝ այն դիտարկելով որպես խրախուսանքի միջոց կիրառելու հիմք,**

✓ **ապահովել դրա կարիքն ունեցող ազատությունից զրկված անձանց ներգրավվումը միջնակարգ կրթությանը, ներգրավել բոլոր անչափահասներին միջնակարգ կրթությանը,**

✓ **պարբերաբար կազմակերպել ազատությունից զրկված անձանց կարիքներին համապատասխանող կրթական դասընթացներ, այդ թվում՝ մասնագիտական դասընթացներ (վարսահարդարման, դերձակության, խոհարարության, համակարգչային ծրագրավորման, շինարարական գործի, ավտոմեխանիկայի, վարորդական հմտություններ և այլն),**

²⁹ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության գործունեության տարեկան հաշվետվությունը (2016 թվականի սեպտեմբեր-2017 թվականի սեպտեմբեր) <http://moj.am/article/1843> կայքէջում:

³⁰ Տե՛ս «Քրեակատարողական համակարգում ազատությունից զրկված կանանց և անչափահասների իրավունքների ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի արտահերթ հրապարակային զեկույցը <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/b1290ae68d58b1d1d0c065ac84c7827b.pdf> կայքէջում, էջեր 52-58:

✓ կազմակերպել հատուկ վերապատրաստումներ ազատությունից զրկված անձանց հետ աշխատող դասավանդող անձնակազմի համար:

3) Մշակութային միջոցառումներ և ազատ ժամանց

Ազատությունից զրկված անձանց ուղղման, վերասոցիալականացման և ճիշտ արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման հարցում կարևոր է նրանց ազատ ժամանցի կազմակերպումը, քանի որ մշակութային դաստիարակությունը, նախընտրությունների ձևավորումը կարևոր նշանակություն ունեն անձի արժեքային համակարգի ձևավորման և համապատասխանաբար քրեական ենթամշակույթը մերժելու համատեքստում:

2016-2017 թվականների ընթացքում քրեակատարողական հիմնարկներում կազմակերպված մշակութային միջոցառումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք կազմակերպվում են ոչ բոլոր հիմնարկներում³¹, նույնատիպ են, ինչը ժամանակի ընթացքում հանգեցնում է այդ միջոցառումների հուզական ազդեցության և դրանց նկատմամբ հետաքրքրության աստիճանի նվազմանը: Սպորտային միջոցառումների մասնակցությունը նույնպես հասանելի է սահմանափակ թվով անձանց, քանի որ դրանք ունեն որոշակի ուղղվածություն, ինչպիսիք են՝ վազք, հեռացատկ, ձեռնամարտ, և չեն ընձեռում առողջ ապրելակերպը պահպանող և խրախուսող մարզումներով զբաղվելու հնարավորություն, ինչպիսին, օրինակ, կարող է լինել որոշակի սարքավորումներով հագեցած մարզասրահը:

Միջազգային երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թատերական ներկայացումները, պարերը, ֆիլմերի դիտումները, օպերաները և այլ մշակութային միջոցառումները լայնորեն կիրառվում են վերասոցիալականացման համատեքստում:

Բելգիայում, օրինակ, դատապարտյալներին հասանելի է համացանցի սահմանափակ մուտք՝ որոշակի առցանց գնումներ կատարելու և ֆիլմեր ներբեռնելու հնարավորությամբ³²:

Ազատությունից զրկված անձանց զբաղվածության տեսանկյունից շատ կարևոր են նաև վերջիններիս ստեղծագործ աշխատանքների, արհեստով կամ արվեստով զբաղվելու հնարավորությունների ապահովումը և դրանց խրախուսելը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է.

✓ մշակութային միջոցառումների ծրագրեր մշակելիս հաշվի առնել ազատությունից զրկված անձանց կարիքները,

✓ միջոցառումները կազմակերպել պարբերաբար և բոլոր քրեակատարողական հիմնարկներում,

✓ ապահովել մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություններ (մարզասարքեր, մարզադահլիճ):

³¹ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության <https://ced.am> կայքէջում:

³² Տե՛ս E-bo enterprises <https://www.ebo-enterprises.com/prisoncloud> կայքէջում:

1.5. Պահման ընդհանուր պայմաններ

Քրեակատարողական հիմնարկների արդյունավետ կառավարման հիմնարար սկզբունքներից է ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի արժանապատվության հարգումը ցանկացած պարագայում: Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությունը հանրային իշխանության պարտականությունն է: Սա նշանակում է, որ քրեակատարողական համակարգի իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ ազատությունից զրկման վայրի պայմանները բավարարեն ազատությունից զրկված անձանց առնվազն հիմնական պահանջմունքներին, ինչն ամրագրված է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային չափանիշներին: Անձինք քրեակատարողական հիմնարկներում պետք է ապահովված լինեն պատշաճ բնակելի տարածքով, բնական և արհեստական լուսավորությամբ, անկողնային պարագաներով և հագուստով, սննդի և ջրի հասանելիությամբ, անձնական հիգիենայի և սանիտարական կարիքները հոգալու, հանգստի, բացօդյա զբոսանքի ու մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություններով և այլն:

Պահման պատշաճ պայմանների ապահովումը մեծ ազդեցություն ունի ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի վարքագծի և քրեակատարողական համակարգի, ինչպես նաև այլ անձանց նկատմամբ վերաբերմունքի վրա: Սա անչափ կարևոր է քրեակատարողական հիմնարկում ընդհանուր կարգապահությունը պահպանելու, այդ թվում՝ քրեական ենթամշակույթի ազդեցությունը նվազեցնելու համար: Անձանց հիմնական կարիքների բավարարումը հենց հանրային իշխանության ներկայացուցիչների կողմից ստեղծում է դրանց նկատմամբ հարգալից վերաբերմունք և վստահության մթնոլորտ, ինչը կարևոր դերակատարություն ունի հանրորեն վտանգավոր արարքներից և քրեական ոչ ֆորմալ հարաբերություններից անձանց զերծ պահելու գործընթացում: Սկզբունքը պետք է լինի հետևյալը. ազատությունից զրկված անձանց հիմնական պահանջմունքները պետք է բավարարված լինեն պետության կողմից:

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում առկա են ազատությունից զրկված անձանց պահման ընդհանուր պայմանների հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք պարբերաբար արձանագրվում են ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի, այնպես էլ միջազգային կառույցների կողմից:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում բարձրացվել են քրեակատարողական հիմնարկներում արձանագրված խնդիրներ, որոնք կապված են հետևյալ հարցերի հետ.

- 1) ազատությունից զրկված անձանց առողջության պահպանման իրավունքի ապահովում,
- 2) գերբնակեցում, խցերում անհավասար տեղաբաշխում,

- 3) լոգանքի ապահովում և սանհանգույցներ,
- 4) սանիտարահիգիենիկ և ընդհանուր պայմաններ,
- 5) ազատությունից զրկված անձանց անհրաժեշտ պարագաներով ապահովում,
- 6) պատշաճ սննդի ապահովում,
- 7) հանգստի, ներառյալ՝ բացօդյա զբոսանքի կամ մարմնամարզությամբ զբաղվելու

իրավունքի ապահովում և այլն:

Նշյալ հարցերին Մարդու իրավունքների պաշտպանի վերոգրյալ զեկույցում կատարվել է մանրամասն անդրադարձ, ներկայացվել են գործնական և իրավական վերլուծություններ և դրանց հիման վրա՝ համապատասխան առաջարկություններ, որոնց իրականացումը լուրջ ազդեցություն կունենա քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց բարեկեցությունն ապահովելու համար: Առաջարկների և ոլորտում բարեփոխումների իրականացումը չափազանց կարևոր է, քանի որ արձանագրված խնդիրները ստեղծում են քրեական ենթամշակույթի գոյության ու դրա ազդեցության համար բարենպաստ պայմաններ:

Այսպես, օրինակ, գերբնակեցման պատճառով քրեակատարողական հիմնարկի վարչակազմը չի կարող պատշաճ իրականացնել իր պարտականությունները, այդ թվում՝ հիմնարկի և անձանց հսկողությունն ու անվտանգության ապահովումը: Մյուս կողմից ազատությունից զրկված անձանց մոտ առաջանում է լարվածություն, հերթափոխով քնելու խնդիր, բռնությունների և ճնշումների գործադրման, ինքնավնասումների, ինքնասպանությունների կատարման ռիսկ, առողջական, այդ թվում՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ և այլն: Այսպիսի պայմանները խթանում են քրեական ենթամշակույթի դիրքերն ամրապնդելու և ազատությունից զրկված անձանց շրջանակում կարգավորումներ իրականացնելու հնարավորությունները:

Ազատությունից զրկված անձանց պահման պատշաճ պայմանների, ինչպես նաև նրանց իրավունքների իրացման հնարավորությունների ապահովման վերաբերյալ խոսելիս պետք է հստակ նշել, որ դա պետք է իրականացնել՝ խստորեն պահպանելով օրենքի առջև հավասարության ընդհանուր սկզբունքը:

ԻսԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում արձանագրել է, որ քրեական ենթամշակույթի ներկայացուցիչներին («նայողներին») *ակնհայտորեն տրված են եղել որոշակի արտոնություններ, օրինակ՝ հիմնարկի ներսում համեմատաբար ազատ տեղաշարժվելու և ցանկացած խուց մտնելու հնարավորություններ*: Նշվել է նաև, որ *վերջիններս ապահովված են եղել ավելի լավ պայմաններով խցերով (բարձրորակ կահույքով)*³³:

Պետք է հստակորեն շեշտել, որ անհրաժեշտ է բացառել ազատությունից զրկված անձանց ցանկացած ոչ իրավաչափ արտոնության տրամադրումը: Դա խարխուլում է իրավական պետության և օրենքի գերակայության սկզբունքները և հիմք է հանդիսանում

³³ Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806bf46f> կայքէջում, կետ 53 և հղում 73:

քրեական ենթամշակույթի ներկայացուցիչների համար իրենց գործառույթներն արդյունավետ կատարելու, ազդեցությունը և դիրքն ամրապնդելու համար:

Այս պահանջն ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածից (օրենքի առջև բոլորի հավասարությունը) և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 8-րդ հոդվածից (օրենքի առջև դատապարտյալների հավասարության սկզբունքը):

Արտոնություններից քրեական ենթամշակույթի ներկայացուցիչներին զրկելն էականորեն կանդրադառնա վերջիններիս հեղինակության և ազդեցության վրա, քանի որ կսահմանափակվեն իրենց գործառույթների իրականացման հնարավորությունները:

ԳԼՈՒԽ 2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ներկայում ներպետական քրեակատարողական օրենսդրությունը հստակորեն չի կարգավորում մի շարք առանցքային հարցեր: Ոչ հստակ կարգավորումները կարող են առաջացնել պետական մարմինների լայն հայեցողություն, կոռուպցիոն ռիսկեր, ինչպես նաև օգտագործվել քրեական ենթամշակույթի ներկայացուցիչների կողմից իրենց ազդեցությունն ուժեղացնելու և դիրքն ամրապնդելու նպատակով: Ուստի, նման երևույթները բացառելու համար առաջանում է օրենսդրական բացերը հստակորեն կարգավորելու անհրաժեշտություն:

Օրենսդրական փոփոխությունները պետք է ուղղված լինեն քրեական ենթամշակույթի տարածման կանխարգելմանն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի կերպով: Պետք է ապահովված լինեն երաշխիքներ, որոնք զերծ կպահեն ազատությունից զրկված անձանց քրեական ենթամշակույթի հետ ցանկացած առնչությունից:

Վերջապես, անչափ կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել ազատությունից զրկված բոլոր անձանց ուղղման և նրանց հասարակություն վերաինտեգրման գործընթացին: Յուրաքանչյուր անձի հետ կատարվող սոցիալական և հոգեբանական աշխատանքները, կարգապահության համար խրախուսանքի ու տույժի միջոցները և զբաղվածության ապահովումը պետք է նպաստեն նրա մոտ իրավահպատակ վարքագծի ձևավորմանը, ինչը մեծ դերակատարություն ունի քրեական ենթամշակույթի տարածումը կանխարգելելու և դրա ազդեցությունը նվազեցնելու տեսանկյունից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ վեր են հանվել քրեակատարողական օրենսդրության կարգավորման խնդիրներ, որոնց կապակցությամբ անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ, ինչը կնպաստի քրեական ենթամշակույթի ազդեցության նվազեցմանը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց ազատ արձակվելու աստիճանական նախապատրաստմանը:

Հարկ է նաև նշել, որ քրեական ենթամշակույթի ազդեցության և դրա տարածման դեմ պայքարն արդյունավետ իրականացնելու նպատակով օրենսդրական կարգավորման ստորև ներկայացված խնդիրների կապակցությամբ համապատասխան փոփոխություններ կատարելու հետ մեկտեղ անհրաժեշտ է ապահովել ներկայացված գործնական խնդիրների լուծումները՝ համարժեք զուգակցմամբ:

2.1. Տեղաբաշխում

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարում պետք է հատուկ ուշադրություն ցուցաբերել քրեակատարողական համակարգում ազատությունից զրկված անձանց տեղաբաշխելու կապակցությամբ, ընդ որում՝ ինչպես քրեակատարողական հիմնարկը, այնպես էլ հիմնարկի խցերն ընտրելիս: Սա կարևորվում է մի քանի տեսանկյունից և արդյունավետ կիրառման դեպքում կարող է էապես ազդել քրեական ենթամշակույթի

ազդեցության նվազեցմանը, խոչընդոտել դրա տարածմանը և նոր ներկայացուցիչների ընդգրկմանը:

Նախևառաջ, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու և հիմնարկի տեսակը փոխելու իրավասությունը վերապահված է Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովին (այսուհետ՝ Տեղաբաշխման հանձնաժողով):

Տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության իրավական հիմքերը և կարգն ամրագրված են ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի մարտի 14-ի թիվ 34-Ն հրամանով³⁴: Դրանով հաստատվում է հանձնաժողովի կազմը և դրա գործունեության կարգը, որն, այնուամենայնիվ, **չի ամրագրում թե ինչով պետք է ուղղորդվի հանձնաժողովը, ինչպես է պատճառաբանելու որոշումները, ինչ չափանիշներ և փաստական հանգամանքներ է հաշվի առնելու անձանց պատիժը կատարելու համար քրեակատարողական հիմնարկն ընտրելիս:**

Բարձրացված խնդրին անդրադարձ է կատարվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում, որտեղ արձանագրվել է նաև, որ *օրենսդրական մակարդակում բացակայում են այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվի Տեղաբաշխման հանձնաժողովը՝ որոշելու համար, թե ըստ որոշված ուղղիչ հիմնարկի տեսակի՝ դատապարտված անձը կոնկրետ որ քրեակատարողական հիմնարկում է պարտիժը կրելու*³⁵:

Օրենսդրությամբ քրեակատարողական հիմնարկ տեղաբաշխելու չափանիշներ ներդնելիս պետք է հաշվի առնել տարբեր հանգամանքներ: Կարևոր է հանցավոր աշխարհի հետ անձի առնչությունը, քրեական ենթամշակույթի նկատմամբ նրա վերաբերմունքը, քրեական ենթամշակույթի ներկայացուցիչների շրջանակում հեղինակությունը, դերը և այլն:

Մոլորվայի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի վերաբերյալ ուսումնասիրությունում, օրինակ, առաջարկվել է քրեական ենթամշակույթի տեսանկյունից առաջնորդներին տեղաբաշխել հատուկ քրեակատարողական հիմնարկ, կամ վերջիններիս բնակեցնել քրեակատարողական հիմնարկի առանձին մասնաշենքում: Սա նպատակ է հետապնդում կանխել քրեական ենթամշակույթի տարածումը, դրա ազդեցությունը, ղեկավար գործառույթներ

³⁴ ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի ապրիլի 21-ի թիվ ՔՀ-26-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 34-Ն հրաման:

³⁵Տե՛ս

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/59297c7b4276c9dbf19cd1f1cfcd92a8.pdf>

կայքէջում, էջեր 139-149:

իրականացնող հեղինակությունների կողմից այլ անձանց միջոցով իրենց դիրքի ամրապնդումը, այլ անձանց շահագործումը և այլն: Այնուամենայնիվ, շեշտվել է, որ նման տարանջատման դեպքում անթույլատրելի է ազատությունից զրկված մյուս անձանց տեղաբաշխումը ոչ ֆորմալ դասակարգային տարբերակման հիման վրա³⁶: Այսպիսի քաղաքականություն է իրականացվել Վրաստանի իշխանությունների կողմից. քրեական աշխարհում հեղինակությունները, մասնավորապես՝ «օրենքով գողերն» առանձնացվել են ազատությունից զրկված այլ անձանցից, և տեղափոխվել են նրանց համար նախատեսված առանձին քրեակատարողական հիմնարկ:

Վերոգրյալը քննարկելիս պետք է հստակ արձանագրել, որ քրեական հեղինակություններին ազատությունից զրկված այլ անձանցից առանձնացնելը չի կարող միայնակ լուծել վերջիններիս ազդեցության և քրեական ենթամշակույթի տարածման խնդիրը: Այն կարող է նպաստել կոնկրետ անձանց ազդեցության նվազեցմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ ազատությունից զրկված անձանց շրջանակներում պարբերաբար կարող են ի հայտ գալ նոր հեղինակություններ, որոնք, օգտագործելով առիթը, կամրապնդեն իրենց դիրքերը:

Պետք է նշել, որ ազատությունից զրկված անձին հասարակություն վերաինտեգրելու և նրան քրեական ենթամշակույթի կողմն անցնելուց զերծ պահելու համար մեծ դերակատարություն ունի նրա ընտանիքի անդամների հետ կապի պահպանումը, որն ամրապնդվում է պարբերական բնույթ կրող տեսակցություններով: Անձի տեսանկյունից ընտանիքի անդամներին, այդ թվում՝ երեխաներին հանդիպելը, նրանց հետ սերտ շփումը և նրանց կրկին անգամ տեսնելու ցանկությունը հոգեբանական մեծ նշանակություն ունեն ազատությունից զրկված անձի ուղղման տեսանկյունից և ձևավորում են ընտանիք հնարավորինս շուտ վերադառնալու կայուն նպատակ, ինչի համար անձը պետք է զերծ մնա ցանկացած իրավախախտում կատարելուց, դրսևորի օրինակելի վարքագիծ, ստանա խրախուսանքի միջոցներ և հավաստիացնի դատարանին, որ իրեն քրեակատարողական հիմնարկում պահելն այլևս չի բխում պատժի նպատակներից:

Ուստի, շատ կարևոր է նպաստել մերձավոր ազգականների հետ կանոնավոր տեսակցությունների ապահովմանը: Այս առումով Տեղաբաշխման հանձնաժողովի դերը ծագում է **անձին մերձավոր ազգականների բնակության վայրին մոտ գտնվող քրեակատարողական հիմնարկ տեղաբաշխելիս**, որն իրական հնարավորություն կստեղծի մերձավոր ազգականների համար քրեակատարողական հիմնարկ պարբերաբար այցելելու համար, քանի որ գործնականում ազգականները դժվարություններ են ունենում իրենց բնակության վայրից հեռու գտնվող քրեակատարողական հիմնարկ այցելելուց, ինչը խոչընդոտում է տեսակցությունների հաճախականությանը³⁷:

³⁶ Տե՛ս «Baseline study into Criminal Subculture in Prisons in the Republic of Moldova», 2018, <https://rm.coe.int/criminal-subculture-md-en-/1680796111> կայքէջում, էջ 39:

³⁷ Մերձավոր ազգականների բնակության վայրին մոտ տեղաբաշխելու պահանջին անդրադարձ է կատարվել Եվրոպական բանտային կանոնների 17.1-րդ կանոնով, որի համաձայն՝ ազատությունից զրկված

Վերոգրյալի հաշվառմամբ՝ պատիժը կատարման համար քրեակատարողական հիմնարկներից առավել նպատակահարմարն ընտրելու տեսանկյունից անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով ամրագրել մշակված չափանիշներ, որոնք թույլ կտան իրավասու մարմնին կայացնել արդյունավետ որոշում՝ հնարավորինս բավարարելով անձի պահանջմունքներն ու ապահովելով պատժի կատարման անհատականացումը:

Անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և դրա արդյունավետ օգտագործումը կարող է նպաստել մի շարք հարցերի լուծմանը: Ընդ որում, նշված գործողությունները պետք է ունենան պարբերական բնույթ անձի մոտ բոլոր զարգացումները դիտարկելու նպատակով: Ստացված տեղեկությունների գնահատման հիման վրա Տեղաբաշխման հանձնաժողովը կարող է արդյունավետ և արդարացի կերպով քննարկել նաև անձի պատժի կրման համար ուղղիչ հիմնարկի տեսակը (ռեժիմը) փոխելու հարցը՝ քրեակատարողական օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության պարագայում:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխում է Տեղաբաշխման հանձնաժողովը՝ հաշվի առնելով որոշակի ժամկետով կամ ցմահ ազատագրկման դատապարտված անձի դրսևորած **վարքագիծը, մեկուսացվածության աստիճանի նպատակահարմարությունը և օրենսգրքով սահմանված դատապարտյալներին անջատ պահելու կանոնները:**

Այստեղ ևս առաջանում է Տեղաբաշխման հանձնաժողովի համար համապատասխան չափանիշների անհրաժեշտություն՝ իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով: **Մասնավորապես, պետք է հստակ լինի, թե ինչ հանգամանքներ են հաշվի առնվում ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելիս (քրեական ենթամշակույթի հետ առնչություն, կարգապահություն, ընտանիքի անդամների հետ կապի պահպանում, մասնակցությունը կրթական ծրագրերին և այլն) և ինչ չափանիշներով է որոշվում մեկուսացվածության աստիճանի նպատակահարմարությունը:**

Ինչ վերաբերում է արդեն քրեակատարողական հիմնարկում խցերում տեղաբաշխման հարցին, պետք է նշել, որ այստեղ իրավասու մարմինը քրեակատարողական հիմնարկի վարչակազմն է: ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման³⁸ հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ *կալանավորված անձը կալանավորվածներին պահելու վայր, իսկ դատապարտյալն ուղղիչ հիմնարկ ընդունվելուց հետո բժշկական հետազոտություն անցնելու և կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պայմաններին ծանոթանալու նպատակով՝ մինչև*

անձինք պետք է հնարավորության սահմաններում տեղաբաշխվեն իրենց բնակության վայրին (...) մոտ գտնվող ազատագրկման վայր:

³⁸ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի եվ ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշում:

յոթ օր ժամկետով տեղավորվում են կարանտինային բաժանմունքի՝ այդ նպատակով նախատեսված խցերում: Նույն հավելվածի 15-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձանց կամ դատապարտյալների՝ կարանտինային բաժանմունքում գտնվելու ընթացքում նրանք տեղաբաշխվում են ըստ խցերի կամ կացարանների, որտեղ կալանավորված անձինք կամ դատապարտյալները փոխադրվում են կարանտինային բաժանմունքում աշխատանքները սահմանված կարգով ավարտվելուց հետո: Կալանավորված անձինք ըստ խցերի տեղաբաշխվում և կալանավորվածներին պահելու վայրերում անջատ են պահվում «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, իսկ դատապարտյալներն ըստ խցերի կամ կացարանների տեղաբաշխվում են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի համաձայն՝ հաշվի առնելով նաև **անձանց համատեղելիությունը, առողջական վիճակը և անվտանգության ապահովումը:**

Նշված դրույթներից ենթադրվում է, որ կարանտինային բաժանմունքում ազատությունից զրկված անձանց տեղավորելու ընթացքում պետք է իրականացվեն համապատասխան գնահատման աշխատանքներ, որոնք ուղղված կլինեն այլ անձանց հետ նրանց համատեղելիությունը և անվտանգությունն ապահովելուն: **Քրեակատարողական հիմնարկի խցերում տեղաբաշխելիս կարևոր է հաշվի առնել անձի մոտ քրեական ենթամշակույթի նկատմամբ վերաբերմունքը, այն հետևելու նրա հակվածությունները, քրեական աշխարհում նրա մասնակցությունը, դիրքը, դերը և այլն: Այս հանգամանքների վերաբերյալ կատարված գնահատումները թույլ կտան այլ ռիսկերի հետ մեկտեղ վեր հանել լոկալ առումով քրեական ենթամշակույթի տարածման դեմ ուղղված լուծումները, որն, իր հերթին, կնպաստի ենթամշակույթի ընդհանուր ազդեցության նվազեցմանը:**

Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում ամրագրել հստակ չափանիշներ, որոնք թույլ կտան իրավասու մարմնին կայացնել արդյունավետ որոշում՝ ազատությունից զրկված անձին պատժի կատարման համար քրեակատարողական հիմնարկն ընտրելու, ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու և խցերում տեղաբաշխելու վերաբերյալ:

2.2. Անհատական գնահատում

Ազատությունից զրկված անձանց անհատական գնահատումներ պարբերաբար իրականացնելն անչափ կարևոր է քրեակատարողական հիմնարկում ընդհանուր կարգապահությունը պահպանելու և բարձր ռիսկայնություն ունեցող անձանց վեր հանելու տեսանկյունից: Ինչպես արդեն նշվել է, գնահատումների անցկացումն անհրաժեշտ պայման է պատժի կատարման համար քրեակատարողական հիմնարկը, ուղղիչ հիմնարկի տեսակը (ռեժիմը) և քրեակատարողական հիմնարկի խցում տեղաբաշխելու հարցը քննարկելիս: Գնահատումները նպաստում են նաև անձանց ուղղման ծրագիրը

մշակելուն, նրանց հետ անհրաժեշտ սոցիալական և հոգեբանական աշխատանքներ իրականացնելուն և, վերջապես, նրանց հասարակություն վերաինտեգրելուն:

Բարձր ռիսկայնություն ունեցող ազատությունից զրկված անձանց վերաբերյալ ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի կողմից մշակված ձեռնարկում շեշտվում է, որ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի անհատական գնահատումը պետք է իրականացվի ինչպես քրեակատարողական հիմնարկ ընդունվելիս, այնպես էլ պատիժը կատարելու ողջ ընթացքում: Այն պետք է ներառի ազատությունից զրկված անձի փախուստի ռիսկերը, փախուստի դեպքում նրանց հանրային վտանգավորությունը, նրա կողմից քրեակատարողական հիմնարկում ընդհանուր կարգին ու կարգապահությանը ոտնձգելու ռիսկերը, ինչպես նաև այն ռիսկերը, որոնք նա կարող է ներկայացնել հասարակությանը քրեակատարողական հիմնարկում պահվելու ընթացքում (ազատության մեջ գտնվող «գործընկերների» միջոցով): Գնահատումը պետք է բացահայտի նաև ազատությունից զրկված անձի ռեաբիլիտացիոն կարիքները, որպեսզի պատժի կատարման պլանը ներառի անձին վերասոցիալականացնելու համար համապատասխան գործողություններ: Վերջապես, հավասարապես պետք է հաշվի առնվեն առողջության գնահատման արդյունքները, մասնավորապես՝ կապված անձի հոգեկան առողջության և ինքնավնասումների կամ ինքնասպանության ռիսկերի հետ³⁹:

Այսպես, օրինակ, Ֆրանսիայի քրեակատարողական օրենսգրքի համաձայն՝ մինչև դատապարտյալի համար քրեակատարողական հիմնարկ ընտրելն իրականացվում է կողմնորոշման վարույթ: Այն ներառում է անձի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունների հավաքումը՝ անձին տեղաբաշխելու նպատակով: Դրանք են դատապարտյալի անձնական հատկանիշները, վերջինիս անցյալը, ունակությունները, ֆիզիկական և հոգեկան առողջության վիճակը, սոցիալական վերաինտեգրման հնարավորությունները: Արդյունքում կազմվում է այսպես կոչված կողմնորոշիչ փաստաթուղթ⁴⁰:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2014)3 վտանգավոր հանցագործների վերաբերյալ հանձնարարականը⁴¹ նույնպես կարևորում է անձի ռիսկայնության գնահատումների անցկացումը: Հանձնարարականի 27-րդ կետի համաձայն՝ *գնահատումները պետք է ներառեն անցյալում անձի կողմից դրսևորած վարքագծերի մանրամասն վերլուծություն և ժամանակագրական, անձնական ու իրավիճակային գործոններ, որոնք հանգեցրել և նպաստել են այդ վարքագծերի դրսևորմանը: Նրանք պետք է հիմնված լինեն լավագույն հուսալի տեղեկատվության վրա:*

³⁹ Տե՛ս «Handbook on the management of high-risk prisoners», UNODC, 2016,

https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/HB_on_High_Risk_Prisoners_Ebook_appr.pdf կայքէջում:

⁴⁰ Տե՛ս <http://prison.eu.org/spip.php?article74> կայքէջում:

⁴¹ Տե՛ս [\[eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+\\(2014\\)+3+concerning+dangerous+offenders.pdf\]\(http://eu.coe.int/documents/3983922/6970334/CMRec+\(2014\)+3+concerning+dangerous+offenders.pdf\) կայքէջում:](https://pjp-</p></div><div data-bbox=)

Հանձնարականի 33-րդ կետը սահմանում է, որ *պետք է հստակ փարանջափել անձի ռիսկերը, որոնք վերջինս ներկայացնում է քրեակատարողական հիմնարկի ներսում և դրա սահմաններից դուրս: Դրանք պետք է գնահատվեն առանձին:*

Նշված գնահատումները նպատակ են հետապնդում կանխարգելելու անձանց կողմից հանրորեն վտանգավոր գործողություններ կատարելը և քրեակատարողական հիմնարկի կարգապահական կանոններին չենթարկվելը, ապահովելու անձանց անհատական կարիքներն ու մյուսների անվտանգությունը, կանխատեսելու անձի մոտ վարքային զարգացումները և ձեռնարկելու դրանց կապակցությամբ համապատասխան քայլեր: Դրանք շատ կարևոր են նաև ազատությունից զրկված անձի ուղղման անհատական պլանն արդյունավետ կազմելու համար:

Գնահատումները դիտարկելի վարքագծի հետ մեկտեղ պետք է ներառեն այլ հատկանիշների և հանգամանքների ուսումնասիրություն, ինչպես, օրինակ՝

- ✓ քրեական ենթամշակույթի նկատմամբ անձի վերաբերմունքը,
- ✓ ենթամշակույթ կրող անձանց շրջանակներում անձի դիրքը և ազդեցությունը,
- ✓ բռնության նկատմամբ վերաբերմունքը,
- ✓ իր գործողությունների հետևանքները կանխատեսելու ունակությունը,
- ✓ անձի վերաբերմունքը տուժողի հանդեպ,
- ✓ այն սոցիալական միջավայրը, որտեղ անձը նախապատրաստվում է վերադառնալ (քրեական միջավայր, կազմակերպված խմբեր),
- ✓ էմոցիոնալ վիճակը և այլն:

Ներկայում ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը չի սահմանում ազատությունից զրկված անձանց գնահատման և դրանց արդյունքների կիրառման վերաբերյալ դրույթներ: Դրանց որոշակի առումով անդրադարձ է կատարվել ՀՀ արդարադատության նախարարի հրամաններով:

Այսպես, ռիսկերի գնահատման մասով ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 194-Ն հրամանի⁴² հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը սահմանում է քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի պետի՝ այլ ստորաբաժանումների հետ համատեղ **բարձր ռիսկայնություն ունեցող կալանավորված անձանց և դադապարտյալներին ի հայտ բերելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պարտականությունը**՝ հաշվառման վերցնելու և հսկողությունն ուժեղացնելու նպատակով: Սակայն նույն հրամանը չի նախատեսում, թե ինչ միջոցներ պետք է իրականացվեն բարձր ռիսկայնություն ունեցող անձանց ի հայտ բերելու ուղղությամբ, և այդ նպատակով ինչպես է իրականացվում քրեակատարողական հիմնարկի կառուցվածքային տարբեր ստորաբաժանումների միջև համագործակցությունը:

⁴² ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 194-Ն հրաման:

Մյուս կողմից, ազատությունից զրկված անձանց ընդհանուր գնահատման վերաբերյալ դրույթներ է պարունակում ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի թիվ 279-Ն հրամանը⁴³, որով կարգավորվում է քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանման գործունեությունը:

Նշված հրամանով նախատեսված են դրույթներ ազատությունից զրկված անձի հոգեբանական և այլ առանձնահատկություններով պայմանավորված համատեղելիության նախնական գնահատականի, ինչպես նաև կարիքների գնահատման անցկացման վերաբերյալ: **Այնուամենայնիվ, հրամանը չի նախատեսում, թե ինչ չափանիշներով պետք է ուղղորդվել անձի մոտ ռիսկայնության և, ընդհանրապես, դրական կամ բացասական վարքագիծը և այլ հատկանիշները գնահատելիս⁴⁴:**

Նույն հրամանի 1-ին հավելվածով նախատեսված է բացասական հակումների կոնցեպտը: Այսպես, հավելվածի 45-րդ կետը սահմանում է, որ *բացասական հակում ունեցող են համարվում այն կալանավորված անձինք և դատապարտյալները, որոնք հիմնարկի ներքին կանոնակարգը խախտելու, իրենց կամ այլ անձանց կյանքին, առողջությանը վնաս պատճառելու վարքագծային և անձնական հակում ունեն, ինչպես նաև այն դատապարտյալները, որոնք ունեն հանցածին դիրքորոշումներ*: Նույն հավելվածի 47-րդ կետը սահմանում է, որ *կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառման են վերցվում որպես բացասական հակում ունեցող, եթե նրանց մոտ առկա են փախուստի (1), ինքնավնասման (2), ալկոհոլի, թմրամիջոցների (3), ագրեսիվության և կոնֆլիկտայնության (4), ինչպես նաև հանցածին դիրքորոշումների (5) հակումներից մեկը*: Հակումներ ունենալու հիմքերը նույնպես նախատեսված են հավելվածում, սակայն, օրինակ, հանցածին դիրքորոշումների հակում ունենալու համար ըստ հավելվածի 47-րդ կետի 5-րդ ենթակետի՝ *հիմք է հանդիսանում անվտանգության ապահովման կամ օպերատիվ ստորաբաժանումների կողմից տրված տեղեկությունները*: Հստակ չէ, թե այդ տեղեկություններն ինչ բովանդակություն պետք է պարունակեն, և ինչն է առհասարակ հանդիսանում հանցածին դիրքորոշում:

Ուստի, հաշվի առնելով բացասական հակումների սահմանափակ շրջանակը և դրանց հաշվառման համար ոչ հստակ հիմքերը՝ կարելի է եզրակացնել, որ բացասական հակումների գործիքակազմը չի հանդիսանում ազատությունից զրկված անձանց մոտ

⁴³ ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 279-Ն հրաման:

⁴⁴ ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-Ն ուժը կորցրած հրամանով նախատեսվում էին որոշ հանգամանքներ և հատկանիշներ (դատապարտյալի ռիսկայնության աստիճանը, կարգապահությունը, ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները և այլն) գնահատելու չափանիշներ, օրինակ՝ դատապարտյալի կապն արտաքին աշխարհի հետ գնահատվում էր բարձր, եթե վերջինս օգտվում էր տեսակցության իրավունքից, հաճախ ունենում էր հեռախոսագրույց, և այլն:

ռիսկայնության և դրական կամ բացասական վարքագծի գնահատման, ինչպես նաև վերջիններիս բնութագրելու բավարար և արդյունավետ միջոց, առավել ևս քրեական ենթամշակույթի տեսանկյունից, քանի որ այն վեր չի հանում նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ:

Վերոգրյալից ակնհայտ է, որ քրեակատարողական օրենսդրությունը կարիք ունի լուրջ փոփոխությունների քրեակատարողական համակարգն առավել արդյունավետ կառավարելու և քրեակատարողական ծառայության առջև դրված խնդիրները լուծելու նպատակով: Քրեական ենթամշակույթի և դրա ազդեցության տարածման դեմ պայքարում շատ կարևոր է տեղեկություններ հավաքագրել այն կրող և դրա ուղղությամբ ակտիվ և պասիվ գործողություններ կատարող բոլոր անձանց վերաբերյալ, պարբերաբար անցկացնել նրանց վարքագծի գնահատումներ, որոնց արդյունքում ժամանակին համարժեք միջոցներ ձեռնարկելու հնարավորություն կառաջանա: Գնահատումը և դրա արդյունքները, ինչպես արդեն նշվել է, կնպաստեն նաև ազատությունից զրկված անձանց կարիքների վեր հանմանը, նրանց հետ տարվող անհրաժեշտ աշխատանքների անցկացմանը, նրանց ազատ արձակվելուն պատրաստելուն և հասարակություն վերաինտեգրելուն:

Հետևաբար, անհրաժեշտ է քրեակատարողական օրենսդրությունում ներդնել համապատասխան հստակ չափանիշների հիման վրա ազատությունից զրկված անձանց մոտ ռիսկայնության և նրանց կողմից դրսևորված վարքագծի մշտական գնահատման կայուն մեխանիզմ:

2.3. Խրախուսանքի և տույժի միջոցներ

Քրեակատարողական հիմնարկում ընդհանուր կարգապահությունը պահպանելու համար կարևոր գործիքակազմ է խրախուսանքի և տույժի միջոցների մեխանիզմը, որը թույլ է տալիս ազատությունից զրկված անձանց խրախուսել դրական վարքագիծ ցուցաբերելու համար, վերջիններիս զերծ պահել կարգապահական խախտումներ կատարելուց, իսկ խախտում կատարած անձանց ենթարկել համապատասխան պատասխանատվության:

Շատ կարևոր է, որ խրախուսանքի և տույժի միջոցների համակարգը հնարավորություն ընձեռի արձագանքելու քրեական ենթամշակույթի և այն կրող անձանց կողմից առաջ եկող մարտահրավերներին:

Խրախուսանքի միջոցների արդյունավետ կիրառումը կարևոր նշանակություն ունի ազատությունից զրկված անձանց ենթամշակույթի ազդեցությունից զերծ պահելու տեսանկյունից:

Այսպես, Մոլդովայի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի վերաբերյալ ուսումնասիրությունում նշվում է, որ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված ոչ բոլոր անձինք են ընդունում քրեական ենթամշակույթը, և ոմանք ակտիվորեն ընդվզում են ենթամշակույթի

շրջանակներում ոչ ֆորմալ ղեկավարության դեմ: Ուսումնասիրությունների արդյունքում առաջարկվել է աջակցել ազատությունից զրկված այն անձանց, ովքեր «մերժում են» քրեական ենթամշակույթը և կամավոր կերպով համագործակցում են քրեակատարողական հիմնարկի ղեկավարության հետ⁴⁵:

Այս առումով «մերժել» քրեական ենթամշակույթը նշանակում է ոչ միայն չենթարկվել այն ղեկավարող անձանց և ենթամշակույթի շրջանակներում ճանաչում ստացած վարքագծի հատուկ կանոններին, այլև զերծ մնալ ցանկացած իրավախախտում կատարելուց, դրսևորել իրավահպատակ վարքագիծ, համագործակցել հիմնարկի վարչակազմի հետ:

Գտնում ենք, որ այսպիսի վարքագիծը խրախուսելն անհրաժեշտ պայման է ենթամշակույթի ազդեցությունը նվազեցնելու համար: Ավելին, խրախուսանքի միջոցները պետք է առաջացնեն անձի համար իրական բարենպաստ հետևանքներ, ինչը պետք է ամրագրված լինի օրենսդրությամբ: Սա ենթադրում է կարգավորման երկու խնդիր: Առաջինը, անձը պետք է տեղյակ լինի, թե իր դրսևորած որ գործողությունների և անգործության համար ինքը կստանա խրախուսանքի միջոց, այսինքն՝ պետք է ապահովված լինի որոշակիությունը, և խրախուսանքի միջոցի կիրառումը պետք է կախված չլինի իրավասու մարմնի լայն հայեցողությունից: Եվ երկրորդը՝ ստացված խրախուսանքի միջոցը պետք է առաջացնի իր համար բարենպաստ հետևանք, այսինքն՝ իրեն տրամադրվելու է լրացուցիչ հնարավորություն (հեռախոսազանգ, տեսակցություններ) և կիրառված խրախուսանքի միջոցը մեծ նշանակություն ունեցող հանգամանք է լինելու պատժի կատարման համար ուղղիչ հիմնարկի տեսակը (ռեժիմը) մեկուսացվածության առավել մեղմ աստիճանի փոխելուց և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելուց:

Նույն տրամաբանությամբ պետք է կարգավորված լինի տույժի միջոցների կիրառման հարցը: Այսինքն՝ քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց համար պետք է հստակ լինի, որ քրեական ենթամշակույթի հետ առնչություն ունենալը, դրա շրջանակներում արգելված գործողություններ կատարելը (օրինակ՝ մոլախաղեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը) իրենց համար առաջացնելու է անբարենպաստ հետևանքներ, որոնք խոչընդոտելու են իրենց պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու և մեկուսացվածության առավել մեղմ ուղղիչ հիմնարկ տեղափոխվելու հարցերում: Ավելին, անձը կարող է տեղափոխվել պատժախուց, և կարող է փոխվել վերջինիս ուղղիչ հիմնարկի տեսակը՝ մեկուսացվածության առավել ծանր աստիճանի: Այսպիսով, տույժի միջոցները կիրականացնեն իրենց պրնցիպալ դերակատարությունը, իսկ խախտում կատարած քրեական ենթամշակույթի ներկայացուցիչների գործողությունները կստանան համարժեք իրավական գնահատական:

⁴⁵ St'u «Baseline study into Criminal Subculture in Prisons in the Republic of Moldova», 2018, <https://rm.coe.int/criminal-subculture-md-en-1680796111> կայքէջում, էջեր 44-45,:

Տույժի միջոցներին անդրադառնալիս կարևոր է նշել նաև դրանց կիրառման պրակտիկան: Ներկայում տույժի միջոցները կիրառելու հարցը քննարկելիս քրեակատարողական հիմնարկի ղեկավարությանը վերապահված է լայն հայեցողություն ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տույժի միջոցների ընտրության (նկատողություն, խիստ նկատողություն, պատժախուց տեղափոխելը), ինչպես նաև պատժախուց տեղափոխելու ժամանակահատվածի (մինչև տասնհինգ օր, իսկ անչափահասի դեպքում՝ մինչև տաս օր) որոշման հարցերում: Հաշվի առնելով նման հայեցողության պայմաններում տույժերի կիրառման ոչ միասնական պրակտիկայի և կոռուպցիոն ռիսկերի հնարավորությունը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է սահմանել տույժի միջոցներն ընտրելու և կիրառելու ուղղորդող չափանիշներ: Սա նպատակ է հետապնդում ապահովելու, որ քրեական ենթամշակույթի ներկայացուցիչների և ազատությունից զրկված այլ անձանց համար հստակ լինի, որ ենթամշակույթի շրջանակներում իրենց կողմից կատարված խախտումները ստանալու են գնահատական և առաջացնելու են համապատասխան անբարենպաստ հետևանքներ, ինչը կախված չի լինելու քրեակատարողական հիմնարկի ղեկավարության հայեցողությունից:

Խրախուսանքի և տույժի միջոցների այս մեխանիզմի նպատակն է հնարավորինս շահագրգռել ազատությունից զրկված անձին դրական վարքագիծ դրսևորելու և քրեական ենթամշակույթի հետ ցանկացած առնչությունից զերծ մնալու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել խրախուսանքի և տույժի միջոցների կիրառման հստակ չափանիշներ՝ ապահովելով իրավական որոշակիությունը:

2.4. Կապն արտաքին աշխարհի հետ

Ընտանիքի հետ սերտ կապերն ուղղակիորեն ազդում են ազատությունից զրկված անձանց բարեկեցության, ընտանիք վերադառնալու նրանց ցանկության և իրավահպատակ վարքագծի դրսևորման վրա, ինչն էլ իր հերթին վերջիններիս զերծ է պահում իրավախախտում կատարելուց և քրեական ենթամշակույթի ազդեցությունից: Սա անչափ կարևոր է անձին վերասոցիալականացնելու և նրա կողմից պատիժը կրելուց հետո հանցավոր գործունեությանը վերադառնալը կանխարգելելու տեսանկյունից:

Արտաքին աշխարհի հետ կապի կարևոր բաղադրիչներից են տեսակցությունները, հեռախոսազանգերը և նամակագրությունը:

Օրենսդրական խնդիրներին անդրադառնալիս հարկ է նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մերձավոր ազգականների հետ դատապարտյալներին տրամադրվում է ամսվա ընթացքում առնվազն մեկ կարճատև տեսակցություն՝ մինչև չորս ժամ տևողությամբ և երկու ամսվա ընթացքում՝ առնվազն մեկ երկարատև տեսակցություն՝ մինչև երեք օր տևողությամբ: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքն,

այնուամենայնիվ, չի նախատեսում երկարատև տեսակցություն ունենալու հնարավորություն կալանավորված անձանց համար: Նշված օրենքի 15-րդ հոդվածի 12-րդ պարբերության համաձայն՝ *կալանավորված անձին մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու տեսակցություն՝ մինչև երեք ժամ տևողությամբ:*

Խնդիրն արձանագրվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից, և դրա, ինչպես նաև այլ խնդիրների լուծման նպատակով մշակվել է օրենսդրական նախագիծ⁴⁶:

Օրենսդրությամբ սահմանված տեսակցությունների նվազագույն քանակների վերաբերյալ պետք է նշել, որ, օրինակ, **Ֆրանսիայում** կալանավորված անձանց թույլատրվում է շաբաթական երեք տեսակցություն, իսկ դատապարտյալներին՝ շաբաթական առնվազն մեկ տեսակցություն⁴⁷: Ընտանիքի անդամների հետ երկարատև տեսակցությունները տրամադրվում են պրոգրեսիվ եղանակով՝ առաջին հանդիպումը 6 ժամով, հաջորդները՝ 24, 48 և 72 ժամով: Տեսակցությունների համար նախատեսված է բնակարաններ հիշեցնող 2-3 սենյականոց, կահավորված, երբեմն այգի ունեցող միավորումներում:

Հեռախոսազանգերի հետ կապված պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ կալանավորված անձանց և դատապարտյալներին արգելված է իրենց մոտ ունենալ ցանկացած տեսակի հեռահաղորդակցության կապի միջոց, այդ թվում՝ բջջային հեռախոսներ, ինչը հանդիսանում է կարգապահական տույժերի կիրառման հիմք:

Այս կապակցությամբ 2018 թվականին **Ֆրանսիան** ծրագրում է ֆիքսված հեռախոսակապ ապահովել խցերում՝ նախապես ընտրված 4 հեռախոսահամարներին զանգելու հնարավորությամբ: Ըստ տվյալների՝ 2016 թվականին պիլոտային ծրագրի արդյունքում հիմնարկում 31 տոկոսով կրճատվել է բջջային հեռախոսների ապօրինի շրջանառությունը, նվազել է լարվածության աստիճանը⁴⁸: **Անգլիայում և Ուելսում** նույնպես նախատեսվում է նման համակարգի կիրարկումը: Զանգերի համար վճարելու են դատապարտյալները, զանգերը կատարվելու են նախապես ներկայացված և Արդարադատության նախարարության կողմից հաստատված հեռախոսահամարներին և դրանք ձայնագրվելու են⁴⁹: Զուգահեռաբար **Մեծ Բրիտանիայի** կառավարությունը քննարկում է բջջային հեռախոսների ազդանշանները խլացնելու մեխանիզմները՝ այդ

⁴⁶ Տե՛ս

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/59297c7b4276c9dbf19cd1f1cfcd92a8.pdf> կայքէջում, էջեր 76-77:

⁴⁷ Տե՛ս L. Kazemian and C. Anderson “The French Prison System: Comparative insights for Policy and Practice in New Yourk and U.S.” <https://jjrec.files.wordpress.com/2014/04/rec20121.pdf> կայքէջում:

⁴⁸ Տե՛ս “French prisons to have landline phones installed in cells” հոդվածը <https://www.theguardian.com/world/2018/jan/02/france-plans-to-put-phones-in-prison-cells> կայքէջում:

⁴⁹ Տե՛ս “UK prison inmates to be given phones in their cells” հոդվածը <https://www.independent.co.uk/news/uk/home-news/uk-prison-phones-cells-reforms-england-wales-justice-secretary-david-guake-a8439811.html> կայքէջում:

թվում խլացուցիչների տեղադրումը և բջջային օպերատորներին արտոնելը՝ ընդհատել բջջայինների անօրինական օգտագործումը⁵⁰:

Հաշվի առնելով ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային օրենսդրությունը և ազատությունից զրկված անձանց համար արտաքին աշխարհի հետ կապի պահպանման կարևորությունը և դրա դրական ազդեցությունը՝ այն պետք է մշտապես լինի քրեակատարողական ծառայության ուշադրության կենտրոնում: Գործնական քայլերից զատ, անհրաժեշտ է իրականացնել նաև բարեփոխումներ օրենսդրական մակարդակով, որն ուղղված կլինի արտաքին աշխարհի հետ կապի ամրապնդմանը:

Այսպիսով, առաջարկում ենք բարեփոխել գործող օրենսդրությունը՝ երաշխավորելով, որ արտաքին աշխարհի հետ կապի պահպանումը խրախուսվում է, տեսակցությունների նվազագույն թույլատրելի քանակն ավելացված է, իսկ սահմանափակումները հիմնավորված և արդարացի են ու բխում են անվտանգության ապահովման պահանջներից: Միևնույն ժամանակ, առաջարկում ենք քննարկել բջջային հեռախոսները քրեակատարողական հիմնարկներում թույլատրելու մեխանիզմի ներդնումը՝ համապատասխան հսկողությամբ և սահմանափակումներով:

2.5. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը

Ազատությունից զրկվելու պահին և պատժի կատարման ողջ ընթացքում անձի պահանջմունքը մնում է հնարավորին շուտ ազատ արձակվելը և հասարակություն վերադառնալը: Անձի այս ցանկությունը և վերջինիս մոտ դրա կապակցությամբ ակնկալիքները կարող են շատ կարևոր գործոն հանդիսանալ դրական վարքագծի դրսևորման համար: Այս առումով պետք է ընդգծել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մեխանիզմի կարևորությունը, որի իրական հնարավորությունը կարող է մեծագույն խթան հանդիսանալ դատապարտյալի ուղղման տեսանկյունից:

Այս մեխանիզմի հիմքում ընկած է մարդասիրության սկզբունքը: Այն երկրորդ հնարավորությունն է ընձեռում ազատությունից զրկված անձանց ապացուցելու, որ իրենց անազատության մեջ պահելն այլևս չի բխում պատժի նպատակներից, և իրենք պատրաստ են հասարակություն վերադառնալու:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու մեխանիզմի արդյունավետությունը կապված է անձանց մոտ ազատ արձակվելու իրական ակնկալիքներ ստեղծելու, վերջիններիս շահագրգռելու և վերադաստիարակելու հետ: Արդյունավետ մեխանիզմի նպատակներից է, որ դատապարտյալը գիտակցի պատժի կատարման ընթացքում իր կողմից դրսևորած վարքագծի արժեքը, ցուցաբերի

⁵⁰ Տե՛ս “Prisons (Interference with Wireless Telegraphy) Bill” [https://hansard.parliament.uk/commons/2018-07-06/debates/4C169D4D-2EB6-4E79-B2FA-F55B2C56D759/Prisons\(InterferenceWithWirelessTelegraphy\)Bill](https://hansard.parliament.uk/commons/2018-07-06/debates/4C169D4D-2EB6-4E79-B2FA-F55B2C56D759/Prisons(InterferenceWithWirelessTelegraphy)Bill) կայքէջում:

կարգապահություն և ձգտի կատարել անհրաժեշտ բոլոր գործողությունները պատիժը կրելուց վաղաժամկետ ազատվելու համար: Սա իր մեջ ներառում է նաև այն, որ անձը պետք է զերծ մնա քրեական ենթամշակույթի հետ ցանկացած առնչությունից: Ուստի, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համակարգը մեծ նշանակություն ունի քրեական ենթամշակույթի ազդեցության տարածման դեմ պայքարում:

Այս կապակցությամբ քրեակատարողական օրենսդրության խնդիրն է ապահովել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման արդյունավետ և գործող մեխանիզմ, որն ուղղված կլինի դրա նպատակների իրականացմանը:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համակարգը ենթարկվել է մի շարք փոփոխությունների: Այսպես, իրավասու մարմինների տեսանկյունից քրեակատարողական հիմնարկի վարչակազմ-անկախ հանձնաժողով⁵¹-դատարան եռաստիճան համակարգից անցում կատարվեց անկախ հանձնաժողով-դատարան երկաստիճան համակարգին: Այնուամենայնիվ, այս մոդելը գործնականում շարունակում էր գործել թերություններով, որը բացասաբար էր անդրադառնում ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության վրա⁵²:

2018 թվականին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համակարգը կրկին ենթարկվել է առանցքային փոփոխությունների, մասնավորապես՝ նախատեսվել է, որ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունները կազմելու են դատապարտյալի վերաբերյալ դրական կամ բացասական զեկույցներ, որոնց հիման վրա քրեակատարողական հիմնարկի վարչակազմն ընդունելու է անձին դատարան ներկայացնելու կամ չներկայացնելու մասին որոշում: Նոր կարգավորումներում, սակայն, նույնպես առկա են մի շարք թերություններ:

1) ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *քրեակատարողական ծառայությունը և պրոբացիայի ծառայությունը պաշտոնական ծանուցումն ստանալուց հետո՝ 80 օրվա ընթացքում, կազմում և ներկայացնում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով նախատեսված հանգամանքների վերաբերյալ զեկույցներ: Համաձայն նույն հոդվածի 5-8-րդ մասերի համաձայն՝ զեկույցները կարող են լինել կամ դրական, կամ էլ բացասական: Այսինքն, քրեակատարողական ծառայությունը և պրոբացիայի ծառայությունը զեկույցներում ամրագրելու են անձի վերաբերյալ վերջնական*

⁵¹ Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողով:

⁵² Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու երկաստիճան համակարգի խնդիրներին անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում:

Տե՛ս զեկույցը

<http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/59297c7b4276c9dbf19cd1f1cfcd92a8.pdf> կայքէջում, էջեր 128-139:

եզրակացություն, որը հանդիսանալու է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման համար դատարան ներկայացնելու հարցը քննարկելու պարտադիր պայման:

ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1-ին մասը սահմանում է դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատելիս հաշվի առնվող հետևյալ հանգամանքները.

- 1) պատժի կրման ընթացքում խրախուսանքի առկայությունը,
- 2) պատժի կրման ընթացքում կարգապահական փուլի առկայությունը,
- 3) պատժի կրման ընթացքում կրթական ծրագրերին, մարզական կամ մշակութային միջոցառումներին կամ դատապարտյալների ինքնագործ միավորումներին մասնակցելը, եթե առկա է եղել նման հնարավորություն,
- 4) պատժի կրման ընթացքում առնվազն երեք ամիս աշխատելը, եթե առկա է եղել աշխատելու հնարավորություն, կամ եթե չաշխատելը պայմանավորված չի եղել դատապարտյալի առողջական խնդիրներով,
- 5) դատապարտյալի պատշաճ վարքագիծը գնահատող այլ հանգամանքներ:

Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.2-րդ մասը սահմանում է դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանքները: Դրանք են.

- 1) դատապարտյալի փարիքը, դատապարտյալի փարիքը հանցագործություն կատարելու պահին,
- 2) հանցագործության բնույթը և հանրային վրանգավորությունը,
- 3) ռեցիդիվի առկայությունը,
- 4) իր կատարած հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը,
- 5) հանցագործությամբ պատճառած վնասը հատուցած կամ այլ կերպ հարթած լինելը կամ պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու վերաբերյալ գրավոր պարտավորություն ստանձնելը,
- 6) նրա վերաբերմունքը քրեական ենթամշակույթի նկատմամբ,
- 7) որոշակի հակումները, հնարավոր կախվածությունները, նախասիրությունները,
- 8) մասնակցությունը վերասոցիալականացման, այդ թվում՝ անձնական զարգացման միջոցառումներին,
- 9) ընդանիքի կամ արտաքին աշխարհի հետ կապը կամ խնամքի փակ գտնվող անձանց առկայությունը,
- 10) սոցիալական միջավայրը,
- 11) առողջական, այդ թվում՝ հոգեկան առողջության վիճակը, հարկադիր բուժման մեջ գտնվելը և հարկադիր բուժման արդյունքը,
- 12) դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատող այլ հանգամանքներ:

Ստացվում է, որ քրեակատարողական ծառայությունը և պրոբացիայի ծառայությունը յուրաքանչյուր անձի համար վերոգրյալ 17 հանգամանքի վերաբերյալ պետք է ներկայացնեն զեկույցներ՝ նշելով վերջնական եզրակացությունը:

Օրենսդրությամբ, սակայն, ամրագրված չէ թե քրեակատարողական ծառայությունը և պրոբացիայի ծառայությունը, քննարկելով վերոնշյալ հանգամանքները, ինչպես են հանգելու վերջնական եզրակացության, գնահատելիս որ հանգամանքներին է տրվելու առավելություն, ինչպես են համադրվելու տեղեկությունները և այլն: Արդյունքում, զեկույց կազմող մարմիններին տրվում է լայն հայեցողություն, որն իր հերթին կոռուպցիոն ռիսկերի և ոչ միասնական պրակտիկայի ձևավորման հնարավորություն է առաջացնում: Իսկ ազատությունից զրկված անձանց համար նման չափանիշների բացակայության պարագայում անկանխատեսելի է, թե համապատասխան մարմինների կողմից ինչ եզրակացություն է սպասվում, և, առհասարակ ինչպիսի վարքագիծ պետք է դրսևորել պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար:

Այս կապակցությամբ հարկ է նաև նշել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ պայմանական ազատման վերաբերյալ թիվ (2003)22 հանձնարարականի⁵³ 5-րդ կետը սահմանում է, որ *պատժի կատարման սկզբից դատապարտյալը պետք է տեղյակ լինի (...)* թե ինչ չափանիշներ են կիրառվելու իրեն պայմանական ազատելու հարցը քննարկելիս: Նույն հանձնարարականի 18-րդ կետի համաձայն՝ *այն չափանիշները, որոնց դատապարտյալը պետք է բավարարի, որպեսզի պայմանական վաղաժամկետ ազատվի, պետք է լինեն հստակ և բացահայտ:*

Քրեակատարողական օրենսգիրքը չի նախատեսում քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցների **պատճառաբանված** լինելու պարտադիր պահանջը, ինչը նույնպես չափազանց խնդրահարույց է: Այս խնդիրն արդիական է եղել նաև պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու նախկին մեխանիզմի գործողության ընթացքում⁵⁴:

Ուստի, անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել հստակ չափանիշներ, որոնց հիման վրա իրավասու պետական մարմինները կազմելու են անձանց՝ պատժի կրումից պայմանական ազատելու վերաբերյալ զեկույցները, իրականացնելու են տվյալների հավաքագրում, գնահատելու են դրանք և ներկայացնելու են պատճառաբանված եզրակացություն:

2) Գործող օրենսդրության մեկ այլ խնդիր է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգավորումը, որի համաձայն՝ *եթե քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները բացասական են, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պատիժը*

⁵³ Տե՛ս <https://rm.coe.int/16800ccb5d> կայքէջում:

⁵⁴ Հարցին արդարադարձ է կատարվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2017 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցում: Տե՛ս զեկույցը <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/59297c7b4276c9dbf19cdf1f1cfcd92a8.pdf> կայքէջում, էջեր 128-139:

կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պարժի չկրած մասն ավելի մեղմ պարժարեսակով փոխարինելու **հարցը դատարան չներկայացնելու մասին որոշում:** (...) **Որոշումը կարող է բողոքարկվել առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան որոշումն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:**

Նշված ձևակերպմամբ ստացվում է, որ պրոբացիայի և քրեակատարողական ծառայությունների զեկույցներն ունեն վճռորոշ նշանակություն անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու համար, ինչը չափազանց խնդրահարույց է: Վերոգրյալ դրույթը սահմանում է պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշման բողոքարկման հնարավորություն, սակայն անհասկանալի է, թե ինչը պետք է քննարկման առարկա դարձնի դատարանը, այն պարագայում, երբ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը դատարան չներկայացնելու մասին որոշումը քրեակատարողական հիմնարկի վարչակազմը կայացրել է ՀՀ քրեակատարողական օրենսգրքով սահմանված կարգով՝ երկու բացասական զեկույցների դեպքում: Այսինքն, վերոնշյալ դրույթն, ըստ էության, սահմանում է իրավաչափ որոշման բողոքարկման հնարավորություն:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ անձի իրավունքների և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման մեխանիզմի տեսանկյունից զեկույցները պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման համար ոչ թե պետք է ունենան վճռորոշ նշանակություն, այլ պետք է խորհրդատվական փաստաթղթեր հանդիսանան դատարանի համար՝ անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս: Կարևոր է նաև շեշտել, որ 2017 թվականի ընթացքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու անկախ հանձնաժողովների **բացասական** եզրակացությունների դեպքերում դատարան ներկայացված պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու **909 դեպքերից 213-ը** դատարանի կողմից բավարարվել են⁵⁵:

Հետևաբար, ելնելով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու մեխանիզմի քննարկված նպատակներից՝ պետք է ՀՀ քրեակատարողական օրենսգրքում նախատեսել հստակ կարգավորումներ կապված դատապարտյալի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը դատարանին ներկայացնելու հետ՝ անկախ իրավասու մարմինների կողմից տրված բացասական զեկույցների առկայության:

3) Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման մեխանիզմի վերաբերյալ վեր հանված հաջորդ խնդիրը վերաբերում է վաղաժամկետ ազատման համար կրկին ներկայացվելու ժամկետներին: Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ **մեկ դրական և մեկ բացասական զեկույց ստանալու և իր համաձայնությունը չտալու հիմքով անձի՝ վաղաժամկետ**

⁵⁵ Տե՛ս

<http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/59297c7b4276c9dbf19cd1f1cfcd92a8.pdf>
կայքէջում, էջ 130:

ազատելու հարցը դատարանն չներկայացնելու որոշում կայացնելու դեպքում դատապարտյալը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ կրկին դիմում կարող է ներկայացնել՝ **երեք ամիս անց**: Նույն հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ դատարանի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում դատապարտյալը վաղաժամկետ ազատելու կրկին դիմում կարող է ներկայացնել **վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամիս անց**:

Ստացվում է, որ անձի կողմից դատարանն դիմելու կապակցությամբ դատարանի կողմից մերժման որոշում կայացնելու դեպքում անձի համար առաջանալու է կրկին անգամ դիմելու հետ կապված անբարենպաստ հետևանք, այն է՝ անձը հնարավորություն է ունենալու կրկին դիմելու միայն վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամիս անց, իսկ որոշումը դատարանն չբողոքարկելու դեպքում անձը հնարավորություն ունի կրկին բարձրացնել պայմանական վաղաժամկետ ազատման հարցը պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի՝ հարցը դատարանն չներկայացնելու որոշումը կայացնելուց հետո երեք ամսվա ընթացքում: Ընդ որում, վեցամսյա ժամկետը սկսվելու է վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, և, եթե անձը բողոքարկի դատարանի որոշումը վերադաս ատյաններ, ապա պատիժը կրելուց վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար ներկայացվելու համար կրկին դիմելու ժամկետը կարող է երկարաձգվել անձի համար անորոշ ժամկետով: **Այս կարգավորումներն անձի կողմից պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի որոշման, ինչպես նաև դատարանի որոշման բողոքարկման համար անուղղակի խոչընդոտներ են ստեղծում:**

4) ՀՀ քրեական օրենսգրքի 77-րդ հոդվածով սահմանվում է պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտը, որի համաձայն՝ *ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար ազատագրվում կրող անձի պատժի չկրած մասը դատարանը կարող է փոխարինել ավելի մեղմ պատժատեսակով (...):*

Պետք է նշել, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելն ու պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելն ըստ էության տարբեր ինստիտուտներ են, սակայն գործող իրավական կարգավորումներով դրանց կապակցությամբ առանձին ընթացակարգեր նախատեսված չեն, և, ըստ էության, դրանք քննարկվում են միասին:

Հստակ և որոշակի կարգավորումների բացակայությունը քննարկվող ինստիտուտների գործնական կիրառության ընթացքում խնդիրներ կարող է առաջացնել: **Ուստի, անհրաժեշտ է նախատեսել համապատասխան լուծումներ, որոնք գործնականում կապահովեն ոչ միայն պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, այլ անձի նկատմամբ նշանակված պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի առանձին քննարկումը:**

Ամփոփելով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման կապակցությամբ օրենսդրական կարգավորման խնդիրները՝ պետք է նշել, որ դրանց կապակցությամբ անհրաժեշտ է՝

✓ օրենսդրությամբ ամրագրել հստակ չափանիշներ, որոնց հիման վրա իրավասու պետական մարմինները կազմելու են անձանց՝ պատժի կրումից պայմանական ազատելու վերաբերյալ զեկույցները, իրականացնելու են տվյալների հավաքագրում, գնահատելու են դրանք և ներկայացնելու են պատճառաբանված հետևություն.

✓ դատապարտյալի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը դատարանին ներկայացնելու հանգամանքը չկապել իրավասու մարմինների կողմից տրված բացասական զեկույցների հետ.

✓ նախատեսել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ կայացված որոշումների բողոքարկման պատշաճ մեխանիզմ՝ բացառելով բողոքարկելու կապակցությամբ անձի համար անբարենպաստ հետևանքների առաջացումը.

✓ մշակել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի քննարկման ինքնուրույն մեխանիզմներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Քրեական ենթամշակույթի արմատավորված և բազմատարր բնույթը պահանջում է, որպեսզի պետությունը դրա նկատմամբ որդեգրի հատուկ և բազմակողմանի քաղաքականություն: Այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով ենթամշակույթի արմատները, դրա ազդեցության տարածման ուղիները և հեռանկարները:

Քրեակատարողական համակարգում ենթամշակույթի ազդեցության տարածումը և իշխող դերն ահազանգում են ինչպես քրեակատարողական համակարգի, այնպես էլ օրենսդրական դաշտի անկատարությունների մասին, ուստի ենթամշակույթի ազդեցության դեմ պայքարում գործողությունները պետք է իրականացվեն ինչպես գործնական, այնպես էլ օրենսդրական մակարդակում՝ համապատասխան զուգակցմամբ, ինչպես արդեն իսկ նշվել է սույն հայեցակարգում:

Հանցավոր ենթամշակույթի դեմ պայքարում ելակետային սկզբունքներից են ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի իրավունքների ապահովումը և նրա վերասոցիալականացմանը նպաստելը, ինչի համար քրեակատարողական համակարգը պետք է ապահովի համապատասխան պայմաններ, ունենա պատրաստված և բավարար անձնակազմ, որն, իր հերթին, պահանջում է համապատասխան սոցիալական երաշխիքների և աշխատանքային պայմանների ապահովում: Միաժամանակ, քրեակատարողական օրենսդրությունը պետք է ուղղված լինի իր առջև դրված նպատակների գործնական իրագործմանը և ոլորտում առաջացող պահանջների կարգավորմանը՝ ստեղծելով ազատությունից զրկված անձի համար կանխատեսելի պատկերացում իր իրավունքների իրացման և պարտականությունների կատարման հարցերում:

Միևնույն ժամանակ, պետք է շեշտել, որ քրեական ենթամշակույթը չի սահմանափակվում միայն քրեակատարողական հիմնարկներում տարածվելով, այն ծավալված է հասարակության առավել լայն շրջանակներում, ուստի այն պետք է արտացոլվի նաև հանցավորության դեմ պայքարի պետության քաղաքականության մեջ՝ ապահովելով արդյունավետ միջոցների կիրառում: